

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPEDIA (مجموعه علوم)

ԽՐԱԿՐԱՊԵՏ—ՏԵՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 14

1898 ՅՈՒՆԻՍ 6

Ամեն ձեռքի համար ծառեկան կանխիկ 50 դահ: Վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 15 դահ: Օտար երկրաց համար ծառեկան կանխիկ 15 Գրան: Թղթասարի ծախսը խմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ու կ'ընդունուի 100 դրուցի ձեռք 105 դրուց:

ԲՈՒԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ղ. ԲՈՒԱՏ — Հանրագիտակի հոր կարգադրութիւնները:
ՔԱՐՈՂ. — Վարագոյրին ետեւէն. — Հարուստին ողորմելին:
ԴԻՏՈՂՆ. — Դպրոցէն ներս:
Ն. ԹՕԳԱԹԼԵԱՆ. — Ժողովրդական իրաւաբանութիւն:
Ղ. ԲՈՒԱՏ. — Այգիներու նոր հիւանդութիւնը. — Միլտիու:
Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ. — Օղը եւ միքրոպները:
Ղ. ԲՈՒԱՏ. — Առսնին կենդանաբանութիւն. — Ցեց և նմանները:
ԱՐԱՔՍ. — Առսնին տնտեսականը:
Զբօսանք. — Հանելուկ թիւ 5:
Պատասխաններ. — Հարցում:
Յ. ՀԱՃԵԱՆ. — Զուարճալիք:

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԻԿՈԼՈՍԵԱՆ

Կ. Պոլիս Զանաֆիլա եօգու եւ Զիւմայիլի Խան Թիւ 28

ՏՕԲ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր զինորական և քաղաքային հիւանդանոցներու մէջ պաշտօն վարած է, պատիւ ունի ծանուցանել թէ՛ այս անգամ իւր բնակութիւնը հաստատած է Դասար-Գիւղ Պատէմ փողոցս թիւ 12. ուր հիւանդ կ'ընդունուի ամեն օր, ի մասնաւորի աչքի հիւանդութեանց: Իսկ Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկեղեցւոյ դիմաց Չպուքճեան Լեւոն էֆէն-տիի հանրածանօթ Դեղարանը, և հոն իրենց դիմող աչքատ հիւանդները ձրի կը դարմանէ

7-10

ԴՊՐԱՊԵՏՍՅԱՆ ԱԶԳԸ ԼՈՅՍ

Թէ առաւօտեան Սրբազան Երզնցոյցութիւնք և թէ ի դէմս Ս. Պատարագի Երզնցոյցութիւնք հրատարակուած են, փոքրիկ դպիրներու համար: Դինը 20 փարա, կը գտնուի Վ. Յ. Մարգարեան գրատունը, Մերձան փողոց թիւ 57:



ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՕՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. Պոլիս Ֆանֆեաւ խանի տակ թիւ 3

Սոյն վաճառատուն պատրաստէ մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամէն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեաքներ, գլխիկներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Լ. Ասլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար

ատեն անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը շրջեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Չարաճճի մուկներու և լուերու եւլն. համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած են ուղղակի Տալմացիայէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք յարգոյ հասարակութեան:



ՀՈՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱԳՈՒԼԵԱՆ

Ճելալ պէյ խանի դրան կից, թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Դաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Չինական, Հնդկական, Ճափայի և Սէյլանի էն ազնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Չգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie

{مجموعه علوم}

Բ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 14

1898 ՅՈՒՆԻՍ 6

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ՆՈՐ ԿՍՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կասկածոտ խարխալութեամբ մը ձեռք զարկած ատեննիս Հանրագիտական հրատարակութեան, երբէք վստահութիւն չունէինք թէ, Հայ ժողովուրդէն քաջալերութիւն պիտի գտնենք: Ուրախութեամբ կուգանք սակայն այսօր, մեր շնորհակալիքը յայտնելով հանդերձ, խոստովանել թէ, ժողովուրդը անյուսալի ընդունելութիւն մ'ըրաւ, թերթիս սկզբնաւորութեան մէջ, իր ընթերցասիրութեան ճաշակը ցուցնելով: Բայց վարանում մը կայ տակաւին, մասնաւորապէս մեր գաւառացի Պատ. ընթերցողներու մէջ, որոնց բերանը այրած ըլլալով անշուշտ կարգ մը չարախախտութեամբ պարբերաբար խափանումէն և վերերեւումէն, հաւատք չունին Հանրագիտական յարատեւութեան վրայ ալ: Տարակոյս չիկայ որ փորձով և գործով պիտի կրնանք հակառակը աղացուցանել իրենց: Բայց այժմէն զիրենք վստահանելու համար, կ'ըսենք թէ մենք Անուանի հետ գործ չունենալով, իրենց վճարած միամեայ բաժնեգինին փոխարէն միշտ 52 թերթ պիտի հատուցանենք միեւնոյն պարունակութեամբ, ինչ որ ալ ըլլայ:

Մեր 12^{րդ} թւոյն մէջ Հանրագիտական նոր կարգադրութեան մը ձեռնարկելնիս գրած էինք: Ահաւասիկ այսօր հրապարակաւ կուգանք ծանօթացնել որ, գործառնութեանց հետզհետէ ընդարձակման պատճառաւ, նախ Վարչական կարեւոր փոփոխութիւններ ըրած ենք, թերթը աւելի շահեկան ընելու, որով և յարատեւութիւնն ալ աւելի ապահով վիճակի մը մէջ կը գրուի: Այս առթիւ յարմար կը դատենք ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ, Չարգարեան Վահան էֆէնտի ի սպառ հրաժարելով գործակցութենէ, պարտաւորեցանք Գրավաճառ Մարգարեան Վահրամ էֆէնտի, որ հանրածանօթ է իր գործունէութեամբ և պատուաւոր դիրքով, թերթիս վարչութեան մէջ առնել:

Մեր նոր կարգադրութեամբ որոշած ենք փորձ մ'ընել թերթիս ԾԱԽԱԼԸ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ 50 ՂՐՈՒՇԻ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՄԻՇՏ ԱՆԻՍՈՒՏ ՊԱՇԵԼՈՎ. որով ամեն շաբթու մեր Պատ. ընթերցողները կ'ունենան 50 թերթ:

Մեր նոր կարգադրութեամբ որոշած ենք փորձ մ'ընել թերթիս ԾԱԽԱԼԸ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ 50 ՂՐՈՒՇԻ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՄԻՇՏ ԱՆԻՍՈՒՏ ՊԱՇԵԼՈՎ. որով ամեն շաբթու մեր Պատ. ընթերցողները կ'ունենան 50 թերթ:

ցողաց առատ, ճոխ և շահեկան նիւթերու ընտիր և բազմազան հաւաքածոյներ պիտի կրնանք ներկայացնել, և իբր գործնական ապացոյց մեր խոստման, այսօրու ընէ սկսեալ հանրածանօթ Հաճեան Յակոբ էֆէնտիի զուարճալիքներէն սկզբնաւորութիւն մը կ'ընենք: Զի մոռնանք նաեւ ըսելու թէ, այդ առթիւ, թերթիս պարունակութեան մասին մեր դաւառացի Պատ. բաժանորդաց առաջարկութիւններն ալ կատարել պիտի ջանանք ամեն կերպով, ամեն դասակարգի փափաքանաց համապատասխան ուղղութիւն մը տալու համար Հանրագործութիւն մը պիտի ըլլայ անշուշտ ասիկա թերթիս վարչութեան կողմէ. որ եթէ գնահատուի հանրութենէն, պիտի յարատեւենք մենք ալ շարունակ ստուար ծաւալով մեր թերթը ներկայացնել օգտաշատ պարունակութիւններով: Բայց իրաւունք ունինք անշուշտ նոյնը սպասելու նաեւ հանրութենէն:

Առաջին եռամսեան յաջողութեամբ բոլորեցինք արդէն, մենք չենք ուզեր մեր բաժանորդներուն վրայ ծանրանալ իրենցմէ կանխիկ տարեկան պահանջելով. բայց իրենց բարոյական աջակցութեան հետ, նիւթական ալ մոռնալու չեն: Վասնզի՝ վճարմանց երկարատեւ յապաղումներ կրնան մատակարարութեան մասին դժուարութիւններ յառաջ բերել, և հետեւաբար ալ վարչական անպատեհութիւններ: Ուստի՝ կը խնդրենք որ՝ բարեհաճին գէթ իրենց ստացած եռամսեայ թիւերու բաժնեդիւնն զրկել մեզ ընդ հուպ: Բայց որովհետեւ Հանրագործութիւն իր Բ. եռամսէին մէջ թեւակոխած է արդէն, այս անգամ ալ մեր Պատ. բաժանորդներն պզտիկ լուհողութիւն մ'ընելով, կրնան առաջին բաժնեգնոյն հետ երկրորդն ալ կցելով այնպէս զրկել մեզ. որով մեր կողմանէ եղած վստահութեան փոխանակութիւն մ'ըրած պիտի ըլլան:

Թերթիս հրատարակութեան ձեռնարկած ատեննիս, մտածած էինք արդէն զայն ժողովուրդին օգտակար և շահեկան ընելու համար, ամեն կարելի միջոցներուն դիմել. ահա այս պատճառաւ էր որ թղթակցութեանց բաժնին մէջ հարց-պատասխանի ճիւղ մը բացինք, որուն օգտակարութիւնը ակնեւ ըլլալուն, չենք ուզեր երկարօրէն ծանրանալ այս կէտին վրայ: Բայց որովհետեւ այդ հարցումներն ուղղորդելէ ոմանք կը փափաքին անմիջական պատասխան մ'առնալ, կը պարտաւորինք այդ մասին մեր պայմանները ի ստորեւ ներկայել:

Ա. Պիտի պատասխանուի ամեն կարգի երկրագործական, Անասնաբուծական, Իրաւաբանական, Արհեստական և Առանին տնտեսական հարցումներու, թէ խմբագրութեանս կողմէ, և թէ աշխատակից մասնագէտներու կողմէ:

Բ. Ղրկուած հարցումներու մէջէն ամենէն առաջ պիտի պատասխանուի անոր, որ հանրային շահուն հետ անմիջական կապակցութիւն մ'ունի. իսկ մնացեալներուն՝ յարմարագոյն առթիւ:

Գ. Պիտի պատասխանեմք միմիայն այն հարցմանց, որոնք կ'ուղղուին Հանրագործութիւն Պատ. բաժանորդներու կողմէ:

Դ. Ամեն անգամ ղրկուած հարցումներն մէկ կամ երկուքէ աւելի ըլլալու չեն. և գրուելու են զատ զատ թուղթերու վրայ, որպէս զի՝ ի պահանջել հարկին կարողանանք թերթիս աշխատակից մասնագէտներու ղրկել:

Ե. Ժողովուրդին օգտակար ըլլալու նպատակով որոշած ենք ուղղուած հարցմանց կարեւորներուն մանրամասն և գործնական բացատրութիւններ տալ, որ կրնայ երբեմն յապաղում պատճառել, բայց վերջապէս ուշ կամ կանուխ պիտի պատասխանուի: Այս պատճառաւ պէտք չէ մենէ անմիջական պատասխան սպասել:

Չ. Յետ այսու թերթիս խմբագրութեան և Տնօրէնութեան վերաբերեալ ամեն գրութիւն պէտք է ուղղել հետեւեալ հասցէին.

Ղ. ԲՈՒՍ

Տնօրէն—Խմբագրապետ Հանրագիտակի

Բիւրօնի Խան—Արամեան Տպարան

Մանուկ-իւստ

Թերթիս վերաբերեալ մնացեալ գործառնութեանց համար գիմեւ

Գրավաճառ Մարգարեան Վահրամ Եփ.ի

Մերեան Զարբ Բիւ 57

Կ. Պոլիս

ՎԱՐԱԳՈՅՐԻՆ ԵՏԵԻՆ

ՀԱՐՈՒՍՏԻՆ ՈՂՈՐՄԵԼԻՆ

Տանըվեց տարի առաջ, Սեւ ծովու փունքը շինուած Պ... քաղաքէն պիտի անցնէի, ճամբաս անկէց էր Պօլիս գալու համար:

Ճիշտ յունիսի սկիզբներն էր, դպրոցի քննութեանց տատենը, քանի մը ծանօթներու կողմէ անարժանաբար ես ալ իբր քննիչ հրաւիրուեցայ. կիւրակի օր հայերէնի քննութիւն պիտի ըլլար:

Կիւրակէ ըլլալուն առթիւ եկեղեցին խուռն բազմութեամբ լեցուած է, ուր տեղի պիտի ունենար տղայոց քննութիւնը:

Քանի մը կարգերու քննութիւնները ընդնալէն վերջը կէս օրուան հանգիստ մը առինք, որմէ ետքը պիտի սկսէինք չորրորդ կարգի հայերէնի քննութիւնը:

Դադարի տատեն առ ու ան գովեստը կ'ընէին չորրորդ կարգէն տղեկի մը. որու համար ամենն ալ միաբերան «առաջին թիւը պիտի չահի և խաչ մըն ալ աւելի» կ'ըսէին բոլորովին վստահ չեղտով մը:

Քննիչներուն մէջէն ամենէն խեղացին բարձր թիւը 5 նշանակած էր. և երբ տղեկ մը աւելի յաջողակ ելլար՝ Դ մըն ալ կ'աւելցնէր 5ին քովը:

Նորէն նստանք քննութեան. չորրորդ կարգը եկաւ շարուեցաւ. բայց այն գովեստը ըրած տղեկին չի կար մէջերին, ասդին անդին նայեցան չի կայ ու չի կայ. փնտռութիւն չորս դին:

Եկեղեցին ընդարձակ բակին մէջ խոշոր թթենիներ կային այն տատեն, յունիսի սկիզբը, թութին ալ ամենէն համով, ամենէն անուշ եղած տատենը:

Պզտիկ տղայ մը թթենիներէն միայն տակը կեցած և ամբողջ ուժովը ձայնը ձգած կը պօռար «նա', նա', Փառնակը ծառին վրայ է, թութ կ'ուտէ»:

Ամենէն առաջ Փառնակի հայրը կը հասնի ծառին տակը, և խապտո ձայնով մը կը կանչէ «Մօ', չար տղայ, չո'ւտ վար իջի'ր»:

Իւր հօրը խիստ ձայնը ցնցեց խեղճ տղեկը, և կարծես ծառին դադարէն սահեցաւ ինկաւ վար, այնչափ որ չուտ հասաւ գետին:

Հայրը Փառնակին ականջէն բռնելով, «Մօ', հիմիկ ականջներդ կը քաշեմ իշու ականջ կը դարձնեմ, գիտե՞ս դուն ինծի... առ ո'ւր էս, կը փնտռենք, կը պօռանք, կը կանչենք ձան չես խտար... մոռցա՞ր քննութիւնդ, հա՞» կ'ըսէր:

«Ի՞նչ անեմ... նայեցայ որ մեր քննութիւնը ուշացաւ... անօթեցայ ալ... առտուն մայրիկս ծոցս կտոր մը հաց դրաւ «անօթէնս նէ կեր» ըսաւ ինծի... հացը թութով ուտեմ ըսի, ելայ ծառան վրայ» կը պատասխանէր Փառնակ:

Բերին ներս, ամենուն աչքերը իր վրայ յառած էին, խեղճ տղեկը կը կարմրակէր կը կենար:

Առաջին տեսնելուս համակրեցայ Փառնակին. կազմը չոր ու բարակ, այնչափ որ «ազուաւր վրան նստի միւս չի գտներ» ըսուելու աստիճան նիհար տղեկ մըն էր. սակայն սիրուն դիմագիծ մը և ուշիմ աչքեր ունէր:

Փառնակի վրայի գլխի հին ու մին հագուստները՝ իրենց պատշաճ կարկտուքներով և կոկիկ մաքրութիւնովը, հոգածու և խնամող մայրիկի մը, և օրէ վաստկող օրէ ուտող աղքատիկ հայրիկի մը զաւակը ըլլալուն տպացոյցներն էին:

Սկսանք քննութեան. չորրորդ կարգը ութ տղեկներէ կը բաղկանար, ամենն ալ իրարու

Հասակակից 12—15, Փառնակի Հազիւ տասներեք տարեկան կար. կարգաւ չարուած էին քով քովի. Ամենէն առաջ երկու տղայ քննուեցան, երկուքն ալ ջոջերու, մենծ աղաներու որդիներ, իրենց արժանիքի որակը քննիչներու գնահատութեան առջեւ 4 թիւը անդին չ'անցաւ:

Կարգը եկաւ Փառնակին, իրեն եղած բոլոր խրթին հարցմանց՝ գրաբար Աւետարանէն լուծումներ, և խեղճ մանկանց ուղեղները փթացնելու համար աշխարհք եկած Գարագաշեանի՝ Գրաբար Քերականութեան խրթին, անվերջանալի և հակասական ոճերու բացատրութիւններ. ամենուն ալ ճիշտ պատասխանները տուաւ:

Քննիչները երբ ուշիմ տղայ մը ձեռք անցնեն, անհատնում և շուարեցուցիչ հարցումներով նուաճել կ'ուզեն զայն, կարծես թէ անոր հետ չափուելու ելած են. խեղճ Փառնակ բնաւ չի դադրեցաւ, ամենուն ալ հասաւ, սակայն քրտինք ջուրի մէջ մտաւ. բողոքներ բարձրացան չորս կողմէն «Հերի՛ք, ալ հերի՛ք չարչրկէք տղան»:

Քննիչներս միաձայնութեամբ ամենէն բարձրագոյն թիւը տուինք Փառնակին 5 Ժ, որովհետեւ արժանի էր աղօր, եթէ չոր թիւով մը մարդու արժանիք կը գնահատուի:

Սակայն խեղճ Փառնակ, որն որ չոր ու ցամաք հաց մը հաղիւ ճարող, պանիրին ախլը քաշող ծնողաց զաւակ, երբ այդ ժամուն 5 Ժ ու մը պատուընում՝ ժամ առաջ իւր պարապ ստամոքսին բողոքը լսեցնելը կը մտածէր, յանկարծ ահագնադղորդ ձայն մըն է, բողոք մըն է կը բարձրանայ եկեղեցիին մէջ: Մտիկ ընենք, քաղքին ամենէն մեծ ջոջն է, մենծ աղան է, հաճի աղան է որ կը խօսի, կատաղած է, փրփրած է հաճի աղան:

— Աս ինչ ըսել է, իմ մանչուս 4 թիւ տաք քէ Մէն...ին մանչուն 5 թիւ տաք... հէ՛մ իրաջ մըն ալ աւելի...աս իրաւո՞ւնք է... իմ մանչս սխալ արաւ նէ անոր մանչն ալ արաւ... էս աս քննութիւնը չեմ սեպեր, ասանկ խայտառակ քննութիւն կ'ըլլայ՝ հէ՛...:

— Հաճի աղա՛, թէեւ Փառնակն ալ սխալ մը ըրաւ, սակայն իր սխալը ինք ուղղեց, մինչդեռ քու մանչուդ սխալը մենք ուղղեցինք, ըսաւ քննիչներէն մին:

— Դուք ալ քննիչ քէ՞ն նստեր էք հող... հէ՛մ դուք ո՞վ էք որ ինծի պատասխան կու տաք, կ'ըսէ և կ'առնէ կը քալէ հաճի աղան: Տակաւին հինգ տղայք կային քննուելիք, կը խանգարուի ամեն բան, և ժողովուրդը ամենն ալ մէկիկ մէկիկ դուրս կ'ելլեն եկեղեցիէն:

Հաճի աղան այնպէս վարժուած է, իր բերնէն ելածը իբրեւ պատգամներ պէտք է ընդունուին, բնաւ առարկութիւն չընդունիր. ի՞նչ ըսել է իր ուղածը չըլլայ, իրաւո՞ւնք է այդ:

Եկեղեցիին բակը ժողովուրդը խուսի խուսի եղած իրարու հետ կարծիքներ կը փոխանակեն. հետաքրքիր կ'ըլլամ կը տեսնեմ որ ամենն ալ հաճի աղային ընթացքը կը սարսաւեն. իր անակալէզները անգամ կը խոստովանին թէ հաճի աղան այս խնդրին մէջ անիրաւ էր — չէի գիտեր սակայն թէ՛ որ խնդրին մէջ իրաւացի էր —:

Մէկն ալ «եկէք Խաչիկ աղօրը կարծիքն ալ առնենք» ըսաւ:

— Տղուս կարծիքը առէք, պատասխանեց Խաչիկ աղբար:

— Դուք ի՞նչ կարծիք ունիք Պր. Փառնակ:

— Ինծի տրուած 5 և Ժին վրայ ալ աւելցուցէք, 20 աւելցուցէք, 100 աւելցուցէք, և տարէք տուէք հաճի աղային մանչուն, եթէ ատով իր փարաները կը շատնայ... անօթի էի, թուր ուտելու համար ծաւր ելայ, ան ալ չի թողուցիք և բերիք ինծի 5 և Ժ մը տուիք, ադ իմ փորս կը կշտա՞ցնէ... ձեզի ըլլայ, տուէք տուէք հաճի աղային, որ ան ալ շատ տեսաւ ինծի... հայրիկ, քէ տուն էրթանք, շատ անօթի եմ, կ'ըսէ և հօրը ձեռքէն բռնած կը հեռանայ Փառնակ, սակայն աչքերը լեցուած:

★ ★

Փառնակի համարձակախօսութիւնը և այդ տարիքին մէջ իր վիճակին վրայ ունեցած կատարեալ գիտակցութիւնը կը դիւրիմ գիտ, կ'ապշեցնէ զիս և աւելի կը համակրիմ իրեն, այս անգամ կը սիրեմ զինքը: Խեղճ տղան որ կեանքին մէջ եթէ փառասիրութիւն մը պիտի ունենար՝ քննութեան մը պոթիւ չահած 5 և Ժ մը պիտի ըլլար, ա-

հա՛ այն ալ իրեն թողելու կը զլանային, չա-
հարեր առարկայի մը նման ձեռքէն խել
կ'ուզէին: «Ձեզի ըլլայ, տարէք տուէք հա-
ճի աղային» ըսած ատենը՝ ձայնին հեգնա-
կան՝ սակայն յուզիչ շեշտը աւելի կը սիր-
ցներ ինքզինքը:

Այս առթիւ հետաքրքրութիւնս աւելի կը
քրքրուի և հաճի աղային անցեալը կ'ուզեմ
հասկնալ:

Շատ մութ և սեւ խաւերով կը նկարագ-
րեն իր կեանքը. ունեցած հարստութեան
աղբիւրը շատ մը պղտոր ակերէ՛ բոլորած ըլ-
լալը կը վկայեն, և կը հաստատեն թէ հաճի
աղան տարին քանի մը անգամներ այդ տե-
սակ չնչին պատճառներ կը փնտռէ դպրոցը
և եկեղեցին իր քմահաճոյիցը ծառայեցնելու
համար:

Երբ հանգիպիք նկարագրած հաճի աղա-
յիս պէս մարդոց՝ առանց «ինչո՞ւ»ն փնտռե-
լու, մի քաջուիք ըսելու «Ոչը՞տէ՛ հարստ»,
որովհետեւ «Ամեն ամեն ասեմ ձեզ» ողոր-
մութեան և արգահատանաց արժանի մար-
դիներ են այդպիսիները:

ՔԱՐՈՂ

ԳՊՐՈՑԷ ՆԵՐՍ



«Միտք մը երբ ինքնածին գաղափար
չունի անկախ չէ, այլ բնորոշակիչ»:

Մենք թեթեւօրէն շարժած չպիտի
ըլլայինք, և թէ դաստիարակութեան մէջ
ալ ընդունած չըլլայինք կարգ մը օտա-
րոտի, ընդօրինակեալ թեթեւամտու-
թիւններ, որոնք իրապաշտութեան նո-
հոսանքի մը հետ՝ մեր բնիկ տոհմային
յատկանիչն ջնջելու կը միտին, և մեր
սրտին ու հոգեկան ազնիւ զգացումնե-
րուն վրայ կ'իշխեն: Եթէ թոյլ տանք
որ մեր նոր սերունդն իրապաշտական
գաղափարներ սանձարձակ դիմաւորէ,
ազնուական դաստիարակութիւնն սին
անուրջի մը պիտի վերածուի, և մեր զո-
հաբերութիւններն պիտի ըլլան անիմաստ
և ամուլ:

Յետեւ որոշակի մ'ալ կրնայ ըմբռնել
թէ՛ նիւթին գորգացումն, որ ոյժ մ'է
կենսական պայման մ'է՛ նաեւ յառաջ-
դիմութեան. սակայն՝ երբ նա կը հակա-
ռակի բարուց ազնուութեան, այն ա-
տեն կարող ենք զայն արհամարհել, և
անոր հակաբարոյական գերը դատապար-
տել:

Ամեն շարժում՝ ոյժի մ'արդիւնքն է,
ինչպէս մտային զարգացումն ալ հոգե-
կան զօրաւոր դոյութիւն մը կ'ենթադ-
րէ: Հարկ է ուրեմն, զօրացունել ման-
կան նորածիլ հոգին և դգուել զայն,
առաջնորդելով առաքինութեան ճամ-
բուն մէջ. արիական ոգի մը ներշնչել
անոր, իբրեւ նեցուկ իր դողդաջուն քայ-
լերուն առջեւ: Փափկիկ սիրտ մ'ունի
մանկիկն և դիւրաթեք, և սակայն նա
կը յանձնուի կըթական այնպիսի պաշ-
տօնէի մը, որ նախ ինքն կարօտ է կըր-
թուելու:

Մտային զարգացումն որքանէն կ'սկսի
մանկան հոգւոյն մէջ, թէեւ անիկա ան-
խօս է և լռիկ, սակայն մէն մի շարժում
կը գիտէ հետաքրքիր, մանկան աչերն՝
որ յարաշարժ զոյգ մը լուսալիճ կը ներ-
կայեն, ուշիմութեան և սրամտութեան
նշանակ են:

Արդ՝ դաստիարակն՝ որ մարդիչն պի-
տի ըլլայ մատաղ հոգիներու, կ'ուսու-
ցանէ մանկան ոչ թէ միայն խօսքով այլ
և շարժումով, աչքերով և յօնքերով, և
կ'ազդէ անոր բարուց վրայ, որ դեռ ան-
հաստատ է:

Մանուկն կը դատէ ինքն եւս՝ իր դաս-
տիարակին ընթացքն և անոր մէն մի շար-
ժումներն, և ըստ այնմ գաղափար մը
կը կազմէ անոր վրայ. դաստիարակին
կողմէ ի յայտ եկած անճաշ խօսք մը,
անվայել դիրք մը, իրենց վտանգաբեր
հետեւութիւնն ունին: Ո՛րքան ծանրա-
դին և վսեմ պաշտօն մ'է ուրեմն, ուղ-
ղել մանկան հոգին և Ստոյիկեան ան-
վեհեր սկզբունքով տոգորել զայն:

Անարժան պաշտօնեայք թո՛ղ զգուշանան ուրեմն ձեռք դնել անոր վրայ, զի հոգի մը կը թուլանաւորեն, քան թէ կը կրթեն. «յօնք շինելու աստեն աչք կը հանեն»:

Անիրաւ պիտի ըլլար չ'այտնել թէ՛ մեր կրթական պաշտօնէութեան մէջ ազնիւ հոգիներ կան, որոնք կը ճանչնան իրենց պաշտօնին բարձրութիւնը, բայց կան նաեւ անարժան փոքրոգի համբաւներ, որոնք երբ ասպարէզը ազատ դրանեն, և երբ մանաւանդ անուանական հոգաբարձուներ ունին, այն ատեն իրենց մէջ մի գիրքը՝ պատգամախօսի դերը կ'առնու, և մէջ մի շարժումը՝ հզօր մանկավարժի հովեր:

Միշտ շօշափելի է մեր մէջ այն թերութիւնն, որ պաշտօնի և անձի ընտրութիւն իրարու հետ կը չփոթէ. երբ մէկը անձեռնհաս է թաղային գործոց վարիչն ըլլալու, բայց որովհետեւ ուռուցիկ անուն մ'ունի, անմիջապէս կը հաւաքուինք անոր շուրջը, զի՝ ոսկիներու գէզն է այն. «տաղանդի արժանիք, սրտի գերա՛ջնիւ զգացումներ, մեա՛ք բարով»:

Մեր պաշտօնական մարմնոց բռնած գիրքն՝ հանգէպ դաստիարակութեան, անհասկանալի է և շատ անգամ հակասական: Այս կամ այն անձը հոգաբարձու է, որովհետեւ պաշտօն ունի, կամ թաղական է, որովհետեւ անոր շուրջ կայ իր վրան (°): Մնա՛ւոր պաշտօնասիրութիւն, բայց տուժողը ազգային մանկտին է եղեր. «որո՞ւ հոգ, ի՞նչ ըսեն թող ըսեն, ես կը փակուիմ կը մնամ պաշտօնիս մէջ»:

Թաղականի և հոգաբարձութեան պաշտօնը շատ բարձրէն կը նկատենք մենք, ինչպէս դպրոցական տեսչութիւնն ալ ուսուցչութեան բարձր կոչման հետ:

Ասոնք ազգին համարատու և համարաւոր մարմիններն են, եթէ ատոնց մէջ համերաշխութիւն և կապ չ'կայ բարոյա-

պէս, եթէ ազգականի և բարեկամի փոխարէն հաշիւներ մուտ գտած են, այլ եւս բան մը մի հարցունէք:

Ժողովուրդը միականի չէ, շատ կը խաբուին այն պաշտօնեայք՝ որոնք այս հաւատքն ունին, մենք տեսած ենք արժանաւորագոյն հոգաբարձուներ և անօրէն-ուսուցիչներ, որոնք գիշեր և ցորեկ ջանադիր եղած են ազգային մանկաւոյն բարուք կրթութեան, «ի՞նչ տաղանդը միացունելով գլխու տաղանդին հետ. «Ո՛վ չ'գիտեր թէ հոգաբարձուները +նի-րէ են գպրոցի տնօրէնութեան դէմ»:

Գառ-Գիւղ

ԴԻՏՈՂՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թէ ի՞նչ է ՎԱԳՖԸ

Կ. Պօլսոյ մէջ իր արուարձաններովը մէկտեղ և թէ գաւառները հասարակաց ճամբաներուն վրայ կամ քաղերին անկիւնը կը տեսնուին աղբիւրներ, ուրկէ անցնողը իր պապակը կ'անցնէ. գերեզմանատուներ ուր մեռելներ կը թաղուին, հորեր որոնք ժողովուրդին պէտքերուն կը ծառայեն, վարժարաններ ուր տղայք կը կրթուին, աղօթատեղիներ և ատոնց նման խել մը չէնքեր կամ վայրեր որոնք բարեգործական նպատակի մը համար շինուած կամ հաստատուած են՝ այն առաքինի ու մեծանձն մարդոց կողմէ, որոնց անունը ամէն անհատ օրհնութեամբ կը յիշէ:

Այս տեսակ չէնքերուն կամ տեղերուն համար օրինական լեզուաւ կ'ըսեն թէ՛ «վագֆ»ներ են. այսինքն այնպիսի հաստատութիւններ, որոնցմէ ուղղակի և առանց փուլ մը խի վճարելու ամէն մարդ կրնայ օգտուիլ:

Սակայն յիշուած չէնքերը կամ գետինները բաւական չեն հասարակաց պէտքերը լիովին գոհացնելու քանի որ ատոնք նորագութեան և պահպանման համար շատ մը ծախքերու կը կարօտին. և առանց ատոնց չէ կարելի մշտատեւ հանգամանք տալ բարեգործական ոեւէ հաստատութեան: Այս

պատճառներուն համար բարերարներ ալ գտնուած են, որոնք հասարակաց պէտքերուն ծառայող այդ լաֆֆներուն համար խել մը կալուածներ գնած ու յատկացուցած են պայման դնելով, որ այդ կալուածներուն վարձագիրները միմիայն իրենց նորոգութեան ու անվթար պահպանման գործածուին:

Օրինակի համար երբ ըսենք թէ՝ Իւսկիւտարի մէջ այսինչ տունը Երուսաղիմայ լաֆֆներէն է, պէտք է հասկնանք թէ՝ այդ տան հասոյթը^(*) Երուսաղիմայ վանքին պէտքերուն համար բարերարի մը կողմէ հոգացուած է:

Այս երկրորդ կարգի լաֆֆներն ալ իրենց կարգին երեք տեսակներու կը բաժնուին.

1. Ինարէի վանիտէլու վագֆներ. — Առաջին անգամ Կ. Պօլսոյ և Բուսէլիի և Անտուրուի Կայս. Նահանգաց մէջ, հաստատուած լաֆֆները այս առաջին տեսակէն էին. այսինքն թէ՝ մէկը իր Բեւ- գետին վրայ տուն, խանութ, եւայլն չինելով հասոյթը (վարձագիրը) լաֆֆի մը կամ իր հաստատած լաֆֆին կը յատկացնէր, և այդ Բեւ- գետինը այլ եւս իր սեփականութիւնը ըլլալէ դադրելով լաֆֆին ստացուածքը կըլլար նորոգութեան ծախքերը լաֆֆի կողմէ հոգացուելու պայմանաւ: Սակայն շատ չ'անցած տեսնուեցաւ որ տուն մը նորոգութեան կը կարօտի և կամ խանութ մը ի նորոյ շինութեան պէտք ունի, և լաֆֆը անկարող կը գտնուի զանոնք նորոգելու կամ շինելու, և այսպէսով թէ պէտք եղած հասոյթը չ'արտադրիր, և թէ միանգամայն վարձագիրէն վար դնելով այդ շէնքերը շինող կամ նորոգող վարձակալներ ալ կը պահսին, ահա այդ պատճառներուն համար Սուլթան Սիւլէյման Խանի օրով Եֆէնէյի դրութիւնը հաստատուեցաւ:

2. Ինարէթէնլու վագֆներ. — Այս վերջին դրութիւնը մեծապէս օգտակար եղաւ ժողովրդին, որովհետեւ Եֆէնէյի Լաֆֆէն

լաֆֆներուն մէջ բնակողները լոկ վարձակալներ էին, մինչ այս վերջնոյն մէջ մինչեւ մէկ աստիճան տիրական իրաւունք ունին, և հետեւաբար այս հանգամանքով կրնան ի կենդանութեան կալուածներին ուրիշի փոխանցել (ֆէրաւ ընել) և յետ մահու ժառանգորդներին այդ լաֆֆներուն Եֆէնէյի օրինօք տէր ըլլալ:

Վաֆֆի համար ալ, այս դրութիւնը շատ նպաստաւոր եղաւ. որովհետեւ ինչպէս ըսի՝ այս կերպով քիչ ատենուան մէջ տունները նորոգուեցան, խանութները շինուեցան և լաֆֆի հասոյթները ըստ առաջնոյն կանոնաւոր կերպով գանձուիլ սկսան: Ասոր համար այդ լաֆֆներուն տէր ըլլալ ուզողներէն նորոգութեան կամ շինութեան համար կանխիկ գումար մը առնուեցաւ Եֆէնէյի Եֆէնէյի անունին տակ, և ամեն տարի վճարելու պայմանաւ Եֆէնէյի Եֆէնէյի մը, այսինքն ամենաջնջին վարձագիրն մը որոշուեցաւ, և այսպէսով փոխադարձ առաւելութիւններ ձեռք բերին թէ՝ լաֆֆի վարչութիւնը և թէ՝ անհատը:

Սակայն չը գիտցուի թէ՝ լաֆֆի մատակարարները (Բեւ-գետին) կրնան, ըստ հաճոյս, Եֆէնէյի Լաֆֆէն- Լաֆֆներին Եֆէնէյի Լաֆֆներու փոխել: Առաջները այս տեսակ բան մը գիւրութեամբ կըլլար. լաֆֆին մատակարարը Եֆէնէյի Եֆէնէյին կ'առնէր, և Եֆէնէյի Եֆէնէյին ալ որոշելէ վերջ՝ լաֆֆ տուն մը կամ խանութ մը ուզողին կուտար, զեղծումները այնչափ շատցան որ՝ ասոնց համար մասնաւոր օրէնքի մը պէտքը զգալի եղաւ, և ասոնց հրամանի տեղի ունեցած այս կերպ փոփոխութեանց համար պատժական տրամադրութիւններ ալ իմրագրուեցան^(*):

Այդ օրէնքին թուականէն ի վեր, երբ լաֆֆի Բեւ-գետինն ուզէ Եֆէնէյի Լաֆֆէն տուն մը եւայլն Եֆէնէյի Լաֆֆի փոխել, պարտի նախ՝ շէնքի դատարանին աղերսագիր մը տալ, որուն մէջ տան եւայլն նորոգութեան կամ շինութեան անհրաժեշտ պէտքը, և այդ վիճակին մէջ վարձու բռնող ալ չի գտնուիլն ալ կը բացատրէ. ասոր վրայ լաֆֆի Բեւ-գետինն շէնքի դատարանը կը կոչուի,

(*) Հասոյթ քնելով պիտի իմանանք, 1. Տան վարձագիրն երբ տուի իմարէի վանիտէլու վագֆներէն է: 2. Այն պահի զուամարձ (իմարէի մուհաճէի) զոր ամեն արի սան Սեփականատէր պարսի վնարի վագֆի միւրքեվիլիին իմարէի վանիտէլու վագֆներուն համար: 3. Իմարէի զեմիւնը, երբ մուգաբասալու վագֆներէն է. եւ 4. Մանլիլ եղած պարագային՝ սան արժէք:

(*) 3 ամիսէն մինչեւ 2 արի բանարկութիւն եւ կտւ 6 ամիսէն մինչեւ 3 արի արտ:

և իր Բեթլեհեմի թիւերը ապացուցանող գե-
րմեր կամ հետեւի շայուելէ վերջ, լաֆֆին
լաֆֆին (վագֆին տան մը կամ խանութի
մը լաֆֆ եղած ըլլալը հաստատող թուղթն
է), ալ կը քննուի, և զապէս Բեթլեհեմի կողմէ
Բեթլեհեմի յայտարարութիւնները գրի
կ'առնուին, այս ձեւակերպութեան զապէս Բե-
թլեհեմի կ'ըսեն:

Ասոր վրայ Բեթլեհեմի կողմէ տունին գտնուած
տեղը մասնաւոր պաշտօնեաներ (երկրաչափ,
փորձագէտ անձեր) զրկուելով, նորոգու-
թեան կամ շինութեան կարօտ ըլլալը, այդ
վիճակին մէջ վարձու բռնող չը գտնուիլը,
լաֆֆին դրամ չունենալը, և Բեթլեհեմի փոխ-
ուիլը լաֆֆին համար անհրաժեշտ ըլլալը կը
ստուգուի, և առ այս տրուած էլաճը կայս-
թիւնը հաստատուելէ յետոյ, Բեթլեհեմի լաֆ-
ֆին տունը Բեթլեհեմի կրնայ փոխուիլ:

3. Մուգալթապու վագֆներ. — Այս տե-
սակ լաֆֆներուն գետինը լաֆֆի գտնուած
չէնքերը, ծառերը սեփականատիրոջ ստաց-
ուածքն են: Երբեմն կը պատահի որ Բեթլեհե-
մի լաֆֆներուն չէնքերը, ծառերը, եւ
այլն սեփականատիրոջ կողմէ բարեգործա-
կան նպատակի մը, և գետինն ալ ուրիշ
լաֆֆի յատկացուած ըլլան: այն ատեն գետ-
նին վարձագինը, այսինքն Բեթլեհեմի լաֆ-
ֆին և չէնքերուն կամ ծառերուն Բեթլեհեմի
ալ խոնին կը տրուի: այդ Բեթլեհեմի լա-
ֆֆին գետինն ալ կ'ըսեն:

Բեթլեհեմի կապուած գետինները՝ վրան
գտնուած չէնքերուն կամ ծառերուն վայե-
լումին համար անհրաժեշտ պէտք ըլլալով
սեփականատիրոջ, այդ գետինները նկատ-
ուած են միշտ, այս վերջնոյն ստացուածքը
և ասոր համար է որ երբ Բեթլեհեմի գետ-
նի մը վրայ շինուած չէնք մը ծախել և ու-
րիշի վրայ փոխանցել ուզուի, մասնաւոր
կերպով, այսինքն Բեթլեհեմի հրամանը
առնուելու և այդպէս գետինն ալ զատ գը-
նողին վրայ դարձնելու պէտք չ'մնար: սա-
կայն միայն գետինը ծախուած և փոխան-
ցուած պարագային՝ չէնքերը կամ ծառերը
միասին ծախուած կամ փոխանցուած չեն
ըլլար:

Այդ չէնքերը և ծառերը ինչպէս ըսի,
սեփականատիրոջ ստացուածքն են: տէրը
եթէ ուզէ կրնայ ծախել, շնորհել, վարձու

տալ ի կենդանութեան, և մեռնելէն վերջ
իր ժառագորդները կարող են, ժառանգա-
կան օրինաց համաձայն, գետինն ալ մէկ-
տեղ մեջերսին բաժնել, ինչպէս պիտի ընէին
եթէ մեռնողը միմիայն չարժուէն ստացուածք
թողուր:

Ն. ԹՕԳԱՅԼԵԱՆ

ԱՅԳԻՆԵՐՈՒ ՆՈՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Մ Ի Լ Տ Ի Ո Ւ

(Շար. 8-ու քիւ 13)

2. Պոնտրէզի արգանակ (Bouillie borde-
laise). — Երբ պարզ լուծմունքի անպա-
տեհութիւնները տեսան, այն ատեն իրենց
ուշադրութիւնը դարձուցին Մէտօքի այգե-
պաններու մէկ գեղին վրայ, զոր կը գոր-
ծածէին ի վաղուց անտի, ճամբու եղերքնե-
րը գտնուած որթատունկերը ծեփելու, որ-
պէս զի անցորդները ձուք չի դպցնեն ա-
նոնց: Այս գեղին բաղադրութեան մէջ կը
մտնան պղնձի ծծմբատ (կէշ Լաշէ), կիր (Է-
րէճ) և ջուր: Առաջները սկսան բաղադրու-
թեան մէջ մեծ քանակութեամբ պղնձի
ծծմբատ դնել, զոր օրինակ, 100 լիթրա
ջուրին մինչեւ 8, 10, 14 քիւօ: բայց հետ-
զհետէ փորձով հաստատուցին թէ ամենէն
յարմարագոյն չափերն են 100ին 1 1/2-էն 3
քիւօ աղ (պղնձի ծծմբատ): Հանրային Պար-
տուց Վարչութեան յայտագրին ցոյց տուած
բաղադրութիւնն ալ այս պոլյի պոնտրէզն
է, որ իր մէջ կը պարունակէ վեր ի վերոյ
100ին 2 պղնձի աղ: որ ամենէն յարմարա-
գոյնը կրնայ նկատուիլ: Իր պատրաստու-
թեան եղանակը՝ տրուած յայտագրին մէջ
չտու լաւ բացատրուած է: այսինքն՝ 1 ար-
տավար (պէտէլա) այգիի համար, տակաւի
(Ֆլու) մը մէջ 160 տրամ կոտրտած պղնձի
ծծմբատ դնելու և վրան 3 օխտ տաք ջուր
լիցնելով հալեցնելու է կ'ըսէ: և զատ ա-
մանի մը մէջ ալ կէս օխտ չի մարած կիրի
վրայ 3 օխտ ջուր թափելով մարելու է, յե-
տոյ բարակ մաղէ մ'անցնելով պղնձի աղի
լուծմունքը պարունակող տակաւին մէջ լեց-

նեղու և փայտէ թիով (+բէկ) մը իրար խառնելով աղէկ մը, վրան աւելցնելու է 13½ օխա եւս պաղ ջուր: Իսկ երկրորդ և երրորդ անգամ այգիները դարմանելու համար կը յանձնարարէ կէս օխա պղնձի աղը հալեցնել 4 օխա տաք ջուրի մէջ, և զատ տեղ մ'ալ 250 տրամ չի մարած կիր նոյնպէս 4 օխա ջուրով հալեցնել և մաղէ անցնել: Վերջը պղնձի լուծմունքին խառնելով ամենուն վրայ աւելցնել 17 օխա պաղ ջուր եւս:

Ինչպէս ըսինք, այս բաղադրութիւնը յարմարագոյն կրնայ նկատուիլ և ձեր ըսածին պէս որթատունկերու տերեւները այրելու չափ զօրաւոր չէ: Խնդիրը հսն է որ, ձեր այգեպանները արդեօք բառ առ բառ հետեւած են յայտագրին բացատրութեանց: Ահաւասիկ թէ ի՞նչ կ'ըսէ այս մասին Տր. Բաթուիստ:

Զատ ամանի մը մէջ հալեցնել պղնձի աղը, թողուլ որ աղէկ մը պաղի:

Նոյնպէս զատ ամանի մը մէջ խնամով մաքրել կիրը, այսինքն կամաց կամաց վրան ջուր սրսկելով. յետոյ ջուրի քանակութիւնը շատացնելով ապուրի թանձրութեան բերել, խոշոր մնացած կտորները տրորելով հալեցնել, մաղէ մը անցնելով չի հալած կիրի կտորուանքը զատել: Թողուլ որ աղէկ մը պաղի. և յետոյ կամաց կամաց պղնձի աղի լուծմունքին մէջ լեցնելով շարունակ խառնել և իրար կերցնել: Եթէ՝ կամ պղնձի աղի լուծմունքը, եւ կամ կրաջուրը չի պաղած իրար խառնէք, այն ատեն խառնուրդին մէջի պղնձը անլուծելի վիճակի մը վերածուելով (պղնձի սեւ օքսիտ) երբէք բաղադրութիւնը ազդեցութիւն չ'ըներ հիւսնդութեան վրայ: Ուստի մեծ ուշադրութիւն պէտք է խառնուրդը պատրաստելու ժամանակ, և կրաջուրը (+բէճ առջը) այն ատեն միայն լեցուցէք պղնձի լուծմունքին մէջ, երբ երկուքն ալ հարկւարդի 50 աստիճանէն վար պաղած ըլլան:

Խառնուրդէն յառաջ եկած բաղադրութեան գոյնը պէտք է երկնագոյն կապոյտ (կէօ մալէօ) ըլլայ: Պատրաստուելէն վերջ երբ հանդարտ թողուք բաղադրութիւնը, առատ մրուր (բօքսիտ) մը կ'իջեցնէ յատակը. որ պէտք է աղէկ մը խառնել և իրար կեր-

ցնել և աւելցնել վրան մնացած ջուրը:

Եթէ խառնուրդին մէջ փոքր քանակութեամբ չի լուծուած պղնձի աղ գտնուի, այն ատեն այրող (էփշէ) յատկութիւն մը կ'ստանայ, և հետեւարար մինչեւ որոշեալ աստիճան մը վտանգաւոր կ'ըլլայ որթատունկի տերեւներուն:

Այս անպատեհութիւնը, որ նկատողութեան գլխաւոր կէտ մ'է. յառաջ կուգայ ամեն անգամ որ բաղադրութեան մէջ պէտք եղած չափով կիր չի գտնուիր, կամ գէշ տեսակէ կիր գործածելով և կամ կրաջուրը գէշ պատրաստելով: Ուստի՝ նոր պատրաստուած խառնուրդ մը անմիջապէս գործածելու չէ. մինչեւ որ վստահ ըլլաք թէ՝ իր մէջ գտնուած պղնձի աղը ամբողջովին հալած է՝ թէ ոչ:

Հասկնալու համար թէ պղնձի աղը ամբողջապէս հալած է, Տ. Բաթուիստն կը յանձնարարէ ֆեռօ-սիանիւռ տը բօթասիօմով փորձել: Ահաւասիկ թէ ինչպէս:

Պղինձի աղի լուծմունքին մէջ կամաց կամաց առաջուց պատրաստուած և պաղած կրաջուրը լեցնել, և խառնելէ վերջը ապակեայ գաւաթի մը մէջ խառնուրդէն քիչ մ'առնելով վրան մէկ քանի կաթիլ վերը յիշուած դեղի լուծմունքէն կաթեցնելու է. եթէ պղնձի խառնուրդի գոյնին վրայ ոեւէ փոփոխութիւն չ'ըլլայ, վստահ կ'ըլլաք որ խառնուրդին մէջ գտնուած պղինձը հալած է, հակառակ պարագային՝ այսինքն՝ եթէ ամենափոքր քանակութեամբ չի լուծուած պղինձ գտնուի խառնուրդին մէջ իսկոյն թխագոյն կարմիր մրուր մը կ'իջնէ գաւաթին յատակը, այն ատեն պէտք է կրաջուր աւելցնել խառնուրդին մէջ և կրկին փորձել, մինչեւ որ գոյնին վրայ ոեւէ փոփոխութիւն մը չ'ըլլայ: Ֆեռօ-սիանիւռ տը բօթասիօմը պէտք է 100ին 20 համեմատութեամբ գործածել. այսինքն 100 կուամ ջուրի մէջ պիտի հալեցնէք 20 կուամ ֆեռօ-սիանիւռ: Այս կերպով ահա բոլորովին վստահ կ'ըլլաք թէ, ձեր բաղադրութիւնը լաւ պատրաստուած է:

Պօռուլէղի արգանակը ազդու միջոց մ'է միլտիուի դէմ. նախորդ թւով յիշուած պղնձի աղի պարզ լուծմունքին պէս երբէք տերեւները չ'այրեր եթէ աղէկ պատրաս-

տուած ըլլայ. Գործածող գործաւորին համար վտանգաւոր չէ, տերեւներուն վրայ կը փակի և կարելի է ցախաւելով մը որթատունկերուն վրայ սրսկել, որ փոքրիկ այգիներու համար անժխտելի առաւելութիւն մ'է: Բայց միւս կողմէն իր պատրաստութիւնը երկար և քիչ մը դժուար է, գործածութիւնը աղտոտ, և թանձրութեան պատճառաւ փոշեմաղ ձարձատիջներով դժուար կը սրսկուի: Այսուամենայնիւ ամենէն աւելի ընդհանրացած դեղն է այս միլտիուի դէմ: Ամեն տեղ բաղադրութեան չափեր միեւնոյն չեն. ահաւասիկ մէկ քանիներու չափերը 100 լիթրա ջուրի համար:

1.	Պէճէ	ճճճ	1 1/2	+	էլ	Պարբեր	էր	0.500	հմ
2.	»	»	2	»	»	»	»	1	+
3.	»	»	3	»	»	»	»	1.570	
4.	»	»	4	»	»	»	»	2	—

Ասոր գործածութեան եղանակն ալ ժամանակն ալ նոյնն են:

3. Պղնձի երկքաղախաւոր լուծուածք. (ժանգառ, ճէկկեար, vert-de gris, acetate de cuivre). — Միլտուի դէմ ամենէն աւելի ազդու ճանչցուած միջոցներէն մէկն է. բայց քանի մը տեսակ ժանգառ կայ. Ֆուանսարի մէջ երբ դեղազաւառներէն առնել ուզեն, հետեւեալ անունով կը պահանջեն, verdet gris extra-sec ou grain վերաբէ կէ էտսիւս սէս ան կէն: Ահաւասիկ պատրաստութեան եղանակը. մեծկակ տակառի մը մէջ դրէք 5 քիլո ժանգառ, լեցուցէք վրան 50 լիթրա ջուր, թողուցէք այսպէս 4—5 օր, բայց պէտք է օրը մէկ քանի անգամ թրով կամ փայտով մը խառնել, որ ժանգառը լուծուի ջուրին մէջ. գործածած օրերնիդ ուրիշ տակառի մը մէջ 350—450 լիթրա ջուր կը լեցնէք, որուն վրայ կ'աւելցնէք ժանգառի լուծուածքը մաղէ մը անցնելով: Ժանգառի լուծուածքին միակ պակասութիւնը իր սղութիւնն է:

4. Կը յանձնարարուի նաեւ Պուլլի պէտիւշոն կոչուած դեղը, որուն բաղադրութեան մէջ կը մտնան հետեւեալները.

Պղնձի ծծմբատ	3 քիլո
Նատրոնի բնածխատ (սոփ)	4 1/2 »
Անուշադր 22 աստիճան	1/2 լիթրա
Պարզ ջուր	100 »

Պղնձի ծծմբատը հալեցնել տաք ջուրի մէջ (պաղ ջուրը ուշ կը հալեցնէ), նոյն պէս սոփն հալեցնել ուրիշ տեղ մը. պաղէլէն վերջը սոտայի լուծուածքը կամաց կամաց լեցնել պղնձի լուծուածքին վրայ շարունակ խառնելով: Այս գործողութեան միջոցին խառնուրդը կ'եռայ. երբ այս եռացումը դադարի, այն ատեն քիչ քիչ և շարունակ խառնելով անուշադրը լեցուցէք մէջը. յետոյ մնացած ջուրը աւելցուցէք վրան:

Պատրաստութիւնը և գործածութիւնը շատ դիւրին է. տերեւներուն ալէկ կը փակի, ազդեցութիւնը զօրաւոր է:

5. Շաքարախառն պօռտլէզի արգանակ. — Միլտուի դէմ ամենէն ազդեցիկներէն մէկն ալ այս դեղն է, որովհետեւ շաքարը մեծ կարողութիւն ունի պղինձը հալեցնելու:

Քսան լիթրա ջուրի մէջ հալեցուցէք 2 քիլո պղնձի ծծմբատ. նոյնպէս զատ տեղ մը 4—5 լիթրա ջուրի մէջ 1 քիլո կիր առաջուց մարելով և հալեցնելով կրաջուր մը պատրաստեցէք, 200 կոամ շաքար հալեցուցէք մէջը (Եւրոպայի մէջ մեղրաս — mellese ալ կը գործածեն շաքարին տեղը, որ ճակնդեղէ եւայլն. շաքար պատրաստելէն վերջը, տակի մնացած դիրտն (լիւթոս) է, բայց մենք չ'ունինք մեր երկրին մէջ), և խառնեցէք կամաց կամաց պղնձի աղին լուծուածքին մէջ. թողուցէք այսպէս 8—10 ժամ, որպէս զի շաքարը ներգործէ պղնձին վրայ. յետոյ աւելցուցէք վրան մնացած ջուրը, 100 լիթրաի ամբողջացնելով:

Կրնայինք տակաւին շատ մը բաղադրութիւններ տալ. բայց վերոյիշեալներն ամենէն ազդեցիկը նկատուած ըլլալով, հարկ չի դատեցինք:

Առանց կասկածելու պէտք էք գործածել Հանրային Պարտուց Վարչութեան կողմէ արուած յարաբերի բաղադրութիւնը. որու համար ինչպէս ըսինք, ամենէն աւելի ընդհանրացածն է, բայց միեւնոյն անգամ իր պատրաստութիւնը ալէկ ընելու է:

Ղ. ԲՈԼՍ

ՎՐԻՊԱԿ

13րդ թւոյն 203րդ էջին առաջին սիւնակին մէջ «99% համով» պէտք է կարդալ 99% մահով:

ՕՂԸ ԵՒ ՍԻՔՐՈՊՆԵՐԸ

(Ժողովրդական դասեր)

ՋՈՒՐԻ ՇՈԳԻՆ

Օղին մէջ միշտ և ամենուրեք կը գտնուի ջուրի շոգին՝ որ յառաջ կուգայ ծովերու, լիճերու, գետերու շոգիացումէն. որոց վրայ պէտք է աւելցնել նաեւ բոյսերու և կենդանիներու արտաշնչած ջուրի շոգին։

Երբ ի շնորհս այլեւայլ ֆիզիքական երեւոյթներու ազդեցութեան (տաքութեան նուազումը, ճնշման աճումը եւայլն եւայլն) ջուրի շոգին կը խոտանայ, և յառաջ կը բերէ ամպն, մէգն, ձիւնն, անձրեւն եւայլն։

Օղին կամ կազի մը մէջ գտնուող ջուրի շոգին քանակութիւնը կը չափուի խոնաւաչարական գործիքներով, որոնց ամենէն աւելի գործածութեան են Սօսիւռի մազէ և Ռէնեօի քիմիական խոնաւաչարներն։

Երբ պաղ մարմին մը օդին մէջ դնենք, քիչ ժամանակէն կը տեսնենք որ, ուել քանակութեամբ խոնաւութիւն մը այս պաղ մարմնոյն վրայ կը նստի։ Այսպէս օրինակի համար, առանց ամպի գիշերները, հողը՝ օրուան մէջ արեւէն առած տաքութիւնը ճառագայթացումով (rayonnement) կորսնցրնելով՝ բաւական կը պաղի։ այնպէս որ օդին մէջ գտնուող ջուրի շոգին խոտանալով կը կազմէ, ինչ որ կը կոչենք շաղ (ւէ)։

Ամեն կենդանի և բոյս ապրելու համար պէտք է անպատճառ շնչէ։ Ջուրի շոգին շնչառութեան մէջ մեծ դեր կը խաղայ։ Եթէ ջուրի շոգին բոլորովին նուազի, կենդանիներու շնչառելւորական խողովակներուն մէջ տեսակ մը կճում, ցաւ յառաջ կուգայ։

Ջուրի շոգին ունի եւս ուրիշ յատկութիւններ ոչ նուազ օգտակար։ մասամբ օդը կը զովացնէ, կենդանիներու և բոյսերու արտաշնչութիւնը կը չափաւորէ, կը պահէ հողը խոնաւ և վերջապէս ֆիզիքական այլեւայլ երեւոյթներու ազդեցութեամբ կը խոտանայ և մեզ կը մատակարարէ ջուրն, առանց որոյ կեանքը անկարելի է գոյութիւն ունենալ հողագետիս վրայ գոնէ արդի պայմաններուն տակ։

ԱՄԽԱՅԻՆ ԹԹՈՒ

Ածխային թթուն կը գտնուի օդին մէջ որոշեալ սահմանով մը։ Լճահանրապէս կը տատանի 2 կամ 6 տասը հազարերորդին մէջ։

Ըստ Պուսէնկոյի, մեծ քաղաքներուն մէջ, օրինակի համար Բարիզի, Լոնտրայի մէջ, ածխային թթուին քանակութիւնը կը նուազի գիշերները, իսկ ցորեկները ընդհակառակը կ'աճի։ Ինչ որ աւելւայ, տարբերութիւնը չափազաւի չէ, քանի որ միջին թւով մթնոլորտին մէջ ածխային թթուն երեք (3) տասը հազարերորդ մասը կը կազմէ։

Այս անոտիոյնութիւնը բացատրելու համար քիմիագէտները, բնագէտները տարբեր կարծիքներ յայտնած են։ մենք հոս յիշենք ասոնցմէ միայն երկուքն՝ որք ամենէն ճշմարիտը կը համարուին։

1. Ժայռերու օքսիտացման և վերածման (réduction) շնորհիւ ածխային թթուն կը բաղալուծուի։

2. Բոյսերը ի շնորհս կանաչանիւթին ածխային թթուն կը բաղալուծեն արեւու ճառագայթներու ազդեցութեան տակ։ անոր բնածուլը իրենց հիւսկէնին մէջ կը հաստատեն և օդին մէջ կը վերադարձնեն թթուածինը։

Ամեն մարդ գիտէ որ երբ կրի ջուր թողունք օդին մէջ, քիչ ժամանակէն օդին ածխային թթուն միանալով այս ջուրին հետ, մակերեւոյթին վրայ կը կազմուի կրային բնածխատ (carbonate de chaux-coëca)։

Օդին մէջ գտնուած ածխային թթուն յառաջ կուգայ երկրի ճեղքուածներէն, հրաբուխներէն, հողին մէջ գտնուած գործարանաւոր մարմիններու խմորումէն (fermentation), փտութենէն (putréfaction), օքսիտացումէն։ Միջին կերպով աղբուած մէկ էկտար(*) հող 24 ժամուան մէջ 315 քիլօկրամ ածխային թթու կ'արտադրէ։

Կենդանիներու և մարդոց շնչառութիւնն ալ կուգայ աւելցնել մթնոլորտին մէջ գտնուած ածխային թթուի քանակութիւնը։ Չափահաս մարդ մը ի մօտոյ մէկ օրուան մէջ մէկ քիլօկրամ ածխային թթու կ'արտաշնչէ,

(*) Վեր ի վերոյ իննուկէս հին պրսպար(օհօհիւմ)։

որով 24 ժամուան մէջ բոլոր մարդոց արտաշնչած ածխային թթուի քանակութիւնը կրնայ հասնիլ գրեթէ մինչեւ մէկ միլիոն տակառաչափի (tonne) (*), քանակութիւն մը որ անսպասելի պէտք է կրկնել՝ եթէ հաշուենք բոլոր կենդանիներու արտաշնչումը:

Վերջապէս ասոնց վրայ պէտք է աւելցնել մեր տուներու, գործարաններու մէջ վառած ածուխէն յառաջ եկած ածխային թթուն որ նուազ քանակութիւն մը չէ: Օրինակի համար հանքագէտները հաշուած են թէ Եւրոպիոյ մէջ հողէն տարին 150 միլիոն տակառաչափ հանքածուխ կը հանուի որ այրելով յառաջ կը բերէ 550 միլիոն տակառաչափ ածխային թթու: Կարելի է պէտք է այս թիւը եռապատկել, եթէ հաշուենք աշխարհիս վրայ հանքածուխէն ուրիշ վառած նիւթերէ յառաջ եկած ածխային թթուն:

Կը թուի որ անդադար յառաջ եկած ածխային թթուի քանակութիւնը պարտի քիչ ժամանակէն բոլոր մթնոլորտին մէջ տարածուիլ և զայն արատել: Բայց ինչպէս ըսինք, բոյսերը ածխային թթուն տարազադրելով գրեթէ միեւնոյն ծաւալով թրթուածին օդին մէջ կը վերադարձնեն: Նոյնպէս անուշ կամ ալի ջուրերը, խոնաւ հողը եւայլն մթնոլորտին ածխային թթուէն բաւական մաս մը կը լուծեն, որ պիտի ծառայէ դարձեալ հողային կամ ջրային բոյսերու սնուցման:

Այսպէս ուրեմն բարեբախտաբար մթնոլորտին մէջ գտնուող ածխային թթուի քանակութիւնը գրեթէ անփոփոխելի է: Բարեբախտաբար ըսինք, որովհետեւ եթէ այդ քանակութիւնը չատնալու ըլլար, եթէ մթնոլորտին և կամ մեր բնավայրերուն մէջ հարկւրին մէկ ածխային թթու գտնուէր, հոն անկարելի պիտի ըլլար ապրիլը: Արդէն եթէ այս կազին քանակութիւնը հազարին մէկ ըլլայ, առողջութեան վնասակար է:

Այժմ շատ լաւ կը հասկնանք թէ ինչո՞ւ ոչ միայն հիւանդներուն, այլեւ առողջ մարդոց համար ծովեզերեայ կամ դաշտային կեանքը օգտակար ու առողջարար է, քանի

որ հոն գտնուող ծառերը կամ ծովուն ջուրը մթնոլորտին մէջ գտնուող ածխային թթուի քանակութիւնը կ'ուղղեն կը սահմանեն:

Նոյնպէս կրնանք հետեւցնել թէ ինչո՞ւ պէտք չէ միեւնոյն սենեակին մէջ — նառաւանդ երբ սենեակը փոքր է — շատ անձեր պառկիլ:

Թող մեզ՝ ներուի քիչ մը այս կէտին վրայ շատ կանգ առնելնուս, որովհետեւ առողջապահական տեսակէտով շատ օգտակար ըլլալուն բոլորովին լուռ չէինք կրնար անցնիլ:

Հոս խօսեցանք ածխային թթուի մասին, յիշեմք այժմ բնածուխի օքսիտը, որ առաջինին նման ոչ միայն վնասակար է, այլեւ սարսափելի թոյն մը: Մեր տուներու մէջ բնածուխի օքսիտը ընդհանրապէս յառաջ կուգայ մանչւնիւրու մէջ փայտի ածուխ վառելէ: Ուրեմն մեծ զգուշութիւն պէտք է ընել մանչւնիւրու գործածութեանց մէջ:

(Շարունակելի)

Ռոսնոք

Մ. Կ. ՄԱՍԼԵԱՆ

ԱՌՏՆԻՆ, ԿԵՆԴԱՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ցեց (կէ-վէ) եւ նմանները

(Շար. skn քիւ 11 եւ վերջ)

Ասոնցմէ զատ կան տակաւին կարգ մը թիթեռնիկներ և միջատներ, որոնց թրթուռները տնական պիտոյքներու եւ ուտեստներու մէջ կ'ապրին զանոնք խաթարելով, բայց ցեցերէն տարբեր տեսակներ կը կազմեն. որոնց վրայ խօսելէ առաջ, բացատրենք անմիջապէս ցեցերը ոչնչացնելու միջոցները:

Նախ լաւ ըմբռնեցէք թէ, ցեցերը կը սիրեն մթութիւնը, հանգիստը և լուսթիւնը: Ուստի ամենէն առաջ յանձնարարելի միջոցն է, մերթ ընդ մերթ հանդերձ, մուշտակեղէն եւայլն սնտուկէն կամ դարանէն դուրս հանելով լոյսի ենթարկել, թոթուել, ծեծել և ապա ծալլելով տեղաւորել: Բայց այս միջոցը բաւական չէ, որովհետեւ՝ սրնուկէն կամ դարանէն դուրս հանած ատեն-

(*) մէկ տակառաչափը կ'արժէ հազար փոխաւ:

նիդ, ցեցերը հետեւելով իրենց բնազդով մին, երբ լայս անտէն, և զգան որ իրենց հանգիստը կը վրդովէք անոնց բնակարանը չարժեքով, իսկոյն ինքզինքնին վար կը ձգեն, որով ցեցերը կը թողուք անտուկին մէջ, և կը հանէք դուրս միայն ձեր գոյքերը. և կամ թոթուած ատեննիդ գետինը իյնալով, տախտակամածին ձեղքերուն մէջ կը պահուըտին առժամաբար, և յետոյ իրենց հոտառութեան հետեւելով կը գտնեն իրենց նախկին բնակարանը. Պէտք է գործածել նաեւ միջատասպան դեղեր, որոնց ամենէն ազդեցիկն այսօր Նոֆթալէն կոչուածն է. բայց ասոր ալ ծանր և անտանելի հոտը չատերու անհաճոյ է: Իգափողի փոշին (pyrethre, բիրէ կամ թախթապիթի թօղը ըսուածը) եթէ թարմ և ընտիր տեսակէ է, ամենէն աւելի յարմարագոյնն է:

Ահաւաստիկ ձեզի կարգ մը ցեցասպան դեղեր, զորս կրնաք գործածել վստահութեամբ:

1. Առէք 100 կոամ ալքօլ. — 10 կոամ քափուր (+եֆէրէ), 5 կոամ սնդիկի երկբլորուկ (bichlorure de mercure. sublimé corrosif = աֆէ-լէֆէ). հալեցուցէք քափուրը և երկբլորուկը ալքօլին մէջ, և սափրիչներու փոշեմաղ ձարձատիչով սրսկեցէք ձեր գոյքերուն վրայ թէեւ ազդու միջոց մ'է այս, բայց սարսափելի թոյն մ'ըլլալուն, մեծ զգուշութիւն պէտք է գործածութեան ժամանակ. և աւելի կը յանձնարարուի մուշտակագործներու խանութներու համար, քան թէ տուներու:

2. Փոշիացեալ քափուրն ալ կը յանձնարարուի իբր ցեցասպան դեղ. Բափուրը փոշիացնելու համար, պէտք է դնել դայն փոքր սանդի մը մէջ, — և կամ եթէ չունիք, կրնաք գործածել թէյի գաւաթ մը — և վրան խիստ քիչ ալքօլ լեցնելով տրորել:

3. Ութը մաս իգափողի հետ խառնեցէք 1 մաս քափուրի փոշի և 1 մաս փոշիացած սեւ պղպեղ:

4. Դարաններուն մէջ դրէք գաւաթով փնակաւ թթու (աֆէֆէրէ):

5. Բեւեկին խկուծիւնը (Բէրէ-Պէրէ բահը) նոյնպէս ցեցերուն դէմ ազդու միջոց մ'է:

6. Պանզինը. — 7. Ուրցի խկուծիւնը

(+եֆէրէ-ալ), որուն հոտը մշտատեւ է և ազդեցիկ:

Վերոյիշեալ դեղերուն մէջ հանդերձեղինաց համար ամենէն աւելի յարմարագոյնը իգափողի փոշին է, որուն ազդեցութիւնը աւելի զգալի ընելու համար գործածեցէք ՅՊ բաղադրութիւնը: Իսկ մուշտակեղինաց, գորգերու և կապերտներու համար կրնաք գործածել անխորաբար թէ այս ՅՊ բաղադրութիւնը, և թէ միւսները:

Սօսինք հիմա միւս թիթեռնիկներուն և միջատներուն վրայ, որոնց գլխաւորներն են հետեւեալները:

Ճարպեղինաց լեզուասը (aglossa pinguinalis). — Հրուկներու (pyrale) ցեղակից է, և վերը յիշուած ցեցերէն աւելի խոշոր. վերի թեւերը գորշ դեղնագոյն են, և պճնուած միախառն գոյներով երանգուած օձադոտոյտ գծերով. իսկ վարի թեւերը աւելի բաց և միակերպ գոյնով, կը վերջաւորին երկայնաձիգ ծոպերով:

Թրթուրը 2½—3 հար. մեթր երկայնութիւն ունի, մորթը փայլուն և թխագոյն է, կ'ապրի մասնաւորապէս կարագի, ճարպի, դմակիւզի և նմանեղինաց մէջ. և կը գտնուի առհասարակ անխամ և ալտոտ խոհանոցներու և մառաններու մէջ:

Այնպէս կ'ըսուի թէ՛ այս թրթուրը մարդոց ստամոքսին մէջ ալ կրնայ ապրիլ, և կարգ մը անպատեհութիւններ յառաջ կը բերէ: Լսուած է երբեմն, կամ կարգացուած ալ է լրագիրներու մէջ թէ, այս կամ այն անձը յանկարծ ստամոքսի ցաւ է խօտուկներէ տառապելէ վերջ թրթուրներ... փոխած է. որոնք ուրիշ բան չեն, բայց թէ ճարպեղինաց լեզուաստներ, որ կարագի կամ ճարպի հետ ստամոքսի մէջ կը ներմուծին, ինչպէս և իւրոտ պաղ միս հետ: Թիթեռնիկը իր հաւկիթները կ'ածէ այդ տեստներուն վրայ, զորս անզգուշութեամբ ուտուելով, ստամոքսին մէջ կը բացուին և թրթուրի կը փոխուին:

Չի մոռնանք սակայն ըսելու թէ, երբեմն կարագի, ժամպոնի, սլանիրի եւ այլնի մէջ տեսնուած ձերմակ և փոքրիկ որդերը այս լեզուատներուն հետ երբեք առնչութիւն չունին: Անոնք ձանձի մը որդերն են, որ

ստամոքսի մէջ մտնելուն պէս, այս վերջինին արտադրած թթու հիւթերու ազդեցութեան տակ անօրջապէս կը սատկին, և վտանգաւոր չեն լիզուատներու պէս:

Պղնձաթոյր լեզուատ. — Վերինէն աւելի փոքր և աւելի սիրուն է. վրայի թեւերը թուխ երկաթագոյն են, վարդագոյն գեղեցիկ օձապտոյտ նրբագծերով զարդարուած: և վերի թեւերը հաւասարապէս ամեն կողմ մոխրի պէս տեգոյն են:

Այս թիթեռնիկը ճարպեղինաց լեզուատի թիթեռնիկին հետ ընկերակցաբար կը թռչտի խոհանոցներու և մառաններու մէջ. և իր թրթուրը, զոր Ռէօմիւս կաշեղինաց ցեցակերպ կոչած է, ամեն տեսակ կենդանական չորցած նիւթերով կ'ապրի. նոյնպէս կարգ մը գրադարաններ, որոնք իրր զարդ կը ծառայեն բնակարանին մէջ, և խիստ քիչ անգամներ կը խնամուին, ընդհանրապէս այս պղնձաթոյր լեզուատի խաթարումներուն ենթակայ կ'ըլլան:

Պանրակեր բոտոտը (piophile du fromage). — Գլխուն առաջնակողմը և բողկուկները չիկագոյն, մարմինը սեւ փայլուն փոքրիկ ճանճի մը որդն է այս. որ հոս հոն թռչտելով, ուր որ պանիր գտնայ կը թռչի, և հաւկիթները կ'ածէ, որոնցմէ կը ծնին փոքրիկ և ճերմակ որդեր, զորս շատերնիդ տեսած ըլլալու էք: Այդ որդերը կ'ապրին պանիրով, և եզական յատկութիւն մ'ունին ցատկելու, թէեւ ոտք չունին. բայց ահաւասիկ թէ ի՞նչ միջոցով կը կատարեն. ճատկելու ատեն իրենց պոչին վրայ կը կանգնին, կը գլարին և ծնօտներով պոչերին կը խածնեն, յետոյ յանկարծական ձգտումով մը գլուխին գետինը զարնելով, զսպանակի մը պէս վեր կը նետուին. որով 25—30 հար. մետր բարձրութեամբ կրնան ցատկել:

Ապուխտի բոտոտը. — Ծերմակ, գլանաձեւ և անոնց ոտքի որդ մը, որ պոչին կողմը զոյգ մը մանր փուշեր ունի. պանրակեր որդին պէս աս ալ կը ցատկէ եթէ կարծր և հարթ գետնի մը վրայ դնէք, և կ'ապրի ապուխտի, երչիկի և ասոնց նման ուտեստներու մէջ:

Այս բոտոտը նոյնպէս փոքրիկ սեւ փայլուն ճանճի մը որդն է. և այնչափ շուտ կը բազմանայ, որ անգամ մը եթէ այդ ու-

տեստներէն մէկուն վրայ յարմարադոյն պոյմաններով գտնուի, շատ քիչ ժամանակուան մէջ ամբողջ ապուխտը եւայլն կ'ապահանեն. Այս պատճառաւ, երբ նշմարէք այդ գորշերի որդերը, խիոյն զանոնք ոչնչացնելու ջանացէք հետեւեալ կերպով:

Բարկ (+եւիլ) քացախի մէջ դրէք քիչ մը սեւ պղպեղ փոշիացած, և լուացէք ասով աղէկ մը ապուխտին որդերով վարակուած մասը. որոնք խիոյն դուրս կը թափին. մաքրելէ վերջը կախեցէք ապուխտը ծխալոյզին մէջ. քիչ մը չորնալէն վերջը տակէն փայտ վառեցէք, այնպէս որ մութին մէջ մնայ ապուխտը, առանց տաքնալու: Չորս—հինգ օր վերջը անգամ մ'եւս պղպեղախառն քացախով լուացէք, մաքրեցէք և ծխեցէք 20 վարկեանի չափ. յետոյ պահեցէք աղէկ սեղ մը:

Որովհետեւ խոհանոցէն ներս մտանք, ներկայացնեմ նաեւ ձեզի ծխնելոյզի ջանջուն սոխալը. որ ցորեկները կը պահուելու ծրինելոյզի և պատերու ճեղքերուն մէջ, տախտակներու ետին. և գիշերը կը թափառի խոհանոցին մէջ. 1¹/₂—2 հար. մետր երկայնութեամբ, մոյգ դեղին գոյնով փոքրիկ կենդանի մ'է. ետեւի ոտքերը առջեւինէն շատ երկայն ըլլալով վազելու և ցատկելու մեծ յարմարութիւն ունի: Ասիկա ընտանի ծղրիթն է (շէթլ-+) որ կ'ապրի հացի փշրանքով, ալիւրով, եւայլն, գրեթէ անվնաս. բայց երբ իր աճումը օճանող յարմար տաքութիւն մը ըլլայ իր բնական տեղը, շուտով կը շատնայ, և այն ատեն իրենց ճոճը ունենալով տաղտուկ կը պատճառեն: Այս ճոճը ունի միայն արուն է որ կ'ընէ. իր սիրային երգերն են, որոնցմով կը փորձէ հրապուրել էգն:

Փայտակեր ճնիւնք. — Տեսած էք անշուշտ ամառ գիշերներ, կարծր թեւերով երկայնաձեւ միջատներ, որոնք ծանր ձայնով մը թռչտելով կուգան ճրագին զարնուիլ ուժգնութեամբ, և անկէ կը նետուին ձեր վրայ: Ասոնք պատենաթեւ միջատներ են, և Տաճկաստանի մէջ կը կոչեն ճոճ-պեօճէյէ կամ ճոճ-եօճէյէ-բէն. որոնք շատ մը տեսակներու կը բաժնուին, մեծ ու փոքր, և բազմազան գոյներով:

Ասոնցմէ մին, օրուն ֆռանսացիք իրա-

ւամբ գշիր (vrillette պարփոս) անուանը կուտան, մէկ քանի տեսակներ են, որոնք ամեն տեսակ փայտեղէն կարասիներու մէջ կ'աւարին զանոնք մաղի մը պէս ծակծկելով: Իրենց գոյութիւնը յայտնի կ'ըլլայ ծակերէն դուրս թափած փայտի մանրամաղ փոշիներով. և մերթ Ընդ մերթ, ձմեռը մոտենաւորապէս արունները իրենց կարծր գլուխը փայտին դարնելով, տեսակ մը չոր ձայն կը հանեն, որ կը նմանի իր շարունակութեան մէջ, գլխանի ժամացոյցի յամբ թիւ-թափին, զոր կ'ընդհատեն պահ մը, կը վերսկսին նորէն, և այսպէս շարունակաբար: Բայց կարծես թէ բընապուռմէ մը միշտ, միշտ լուսութեան վարկեաններու մէջ այս տխրագոյնիկ ձայնը կը հանեն, և այս պատճառաւ ալ կը կոչեն մախու զանգակ. որ ուրիշ բան չէ, բայց եթէ արունն սիրոյ երգերն, Թրթուրը միջատին պէս կ'աւարի փայտերուն մէջ, և մասնաւորապէս կենդանին իր այս վիճակին մէջ է որ փայտը կը կրծէ, որ միջատի փոխուելէն վերջը՝ ամառը դուրս կ'ելլէ, կը թռչտի աստ անդ. իր հաւկիթները զետեղելու կարասիներու վրայ նոր տեղեր. որոնք բացուելով, խիտ խիտ աղուամաղերով ծածկուած ճերմակ և կարծր մորթով և զոյգ մը զորաւոր ծնօտներով թրթուրներ կ'ըլլան: Իրենց այս վիճակին մէջ շատ փոքր են. և դիւրութեամբ կը ծակեն փայտը, կը մտնան ներս, և ամեն կողմը փորելով ճամբաներ կը շինեն:

Ասոնցմէ կարգ մ'ալ կ'աւարին գրադարաններու և չորցած կենդանեաց մորթերուն մէջ. և միեւնոյն փնտսները կը հասցենեն:

Այս միջատները յատկութիւն մ'ունին, երբ իրենց դպիք, անմիջապէս ոտքերնին կը կծկեն, և անշարժ կը կենան, իբր թէ մեռած ըլլային, մինչ և իսկ եթէ ասեղով մը ծակէք, երբէք կենդանութեան նշան ցոյց չեն տար. այս պատճառաւ զիրենք կը կոչեն յամառ մեռելակերպեր (anobium peritinax). Երբ կարասիները ծակելով մէջը մըտնեն, այլեւս գոռալուսութեամբ կը գտնէք զանոնք, որովհետեւ իրենց ճամբաները ուղիղ գծի վրայ չեն բանար. բայց զանոնք ոչնչացնելու համար կը յանձնարարուի կարասիներու վրայ ծակ տեսնուած տեղերը

վրձինով մը քսել հետեւեալ բաղադրութիւնը.

Բեւեկինի իսկութիւն (Բէրեթէնի բոն) 10 մաս
Դափնի (Բէթէ Եալը) »
Իրար կը խառնէք և այնպէս կը գործածէք. որուն ազդու հոտը ծակերէն ներս մտնելով, միջատ և թրթուր, ամենն ալ չնջուհեղձ կ'ընէ:

Ղ. ԲՈԼՍ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Պատասխան թիւ 27 հարցման

Մանչեսթըրէն յարգոյ բաժանորդ մը հարցուցած է մեզ թէ՞ փոնչը ի՞նչպէս կը պատրաստուի:

Փոնչին ինչ ըլլալուն վրայ գաղափար մը տալու համար, անցողակի զուրցենք թէ՞ բաղադրութիւն մ'է, թէ՞ յի, լեմօնի հիւթի, և օղիի, կամ ուսի և կամ քիւչի. եւ որ միշտ տաք տաք կը գործածուի:

Լաւ փոնչ մը կրնաք պատրաստել հետեւեալ եղանակով. 10—25 կում Հիշվենի (hyswen) լաւ թէյ առէք. և պատրաստեցէք (ինչպէս որ թէյը կը պատրաստեն) կէս լիթոն եռացած ջուրի մէջ. ու յետոյ լեմօնի մը կէսը բարակ շերտերու վերածելով, մեծկակ ամանի մը մէջ լեցուցէք. և աւելցուցէք 200—250 կում շաքար և թէյը տաք տաք վրան լեցուցէք: Պէտք է աւելցնել նախ $\frac{1}{2}$ լիթրա հին ուս մեծ զգուշութեամբ, այնպէս որ ուսը թէյին հետ չի խառնուի: Քանի մը վայրկեանէ վերջ, երբ ուսը քիչ մը տաքնայ, բռնկցուցէք լուցկիով մը և առանց շարժելու թողուցէք այրի մինչեւ որ ինքնիւրէն մարի: Այն ատեն խառնեցէք դգալով մը որ ամենքը հաւաստին:

Բիւշի, օղիի, և քօնեաքի փոնչերը միեւնոյն կերպով կը պատրաստուին:

Ահաւասիկ ուրիշ միջոցներ ալ:

Սովորական փոնչ

Սանի մը մէջ լեցուցէք 1 քիւշ շաքար, 1 լիթրա ուս, և 1 լիթրա քօնեաք, 4 վայրկե-

նի չափ տաքցուցէք . կրակէն վար առնելով հեղուկը լուցկիով մը բռնկուցէք , և 10 վայրկեանէն մարեցէք , աւելցուցէք վրան մէկ լեմօնի ջուրը և 300 կռամ չաքար որ առաջուց պէտք է լեմօնի մը կամ նարնջի մը արտակեղեւը քսել վրան . և յետոյ խառնեցէք այս ամենը դգալով մը :

Լեցուցէք վրան հիմա առաջուց պատրաստուած կէս լիթրայ թէյի ջեռաթուրմ (infusion de thé) որ խիստ տաք ըլլալու է :

Գլխով պատրաստուած փոնջ

Առէք , 2 լիթրա թէյ , $\frac{1}{2}$ քիւօ փոշիացած չաքար , 3 չիշ Պօռտօի գինի , 1 չիշ մատէսի գինի , 1 լիթրա քօնեաք . 1 չիշ Բօռթօի (ոչ թէ Պօռտօի , այլ Բորթուքալի) գինի . 1 նարնջի ջուրը , պտղուց մը դարիճենիկ (խաւէն) չորս հատ մեխակ (+աբէնֆէլ) , քիչ մը նարնջի արտակեղեւ . և այս խառնուրդը լաւ մը տաքցուցէք , երբ եռալ սկսի , կրակէն ետ առէք , և հաստ կտաւէ մը մզեցէք (սէ-լէշ ւրէտ) :

Անանասի փոնջ

Անանասի մը քառսրդը բարակ շերտերու վերածեցէք . և առաջուց պատրաստուած կէս լիթրա չաքարի ջուրու պ եռացուցէք և անանասին վրայ լեցուցէք . թողէք այսպէս մէկ ժամ . և յետոյ խառնեցէք առաջուց պատրաստուած փոնջերնուդ մէջ :

Վիսֆիի փոնջ

300 կռամ չաքարին վրայ լեցուցէք 3 գաւաթ տաք թէյի ջեռաթուրմ . և կրակին վրայ դրէք մինչեւ որ եփ ելլայ . և այն ատեն վար առէք և խառնեցէք լիթրա մը Անգղիական Վիսֆի :

ԱՐԱՔՍ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Համեազիսակի ուղղուած գիսական արհեստական հարցմանց տրուելիք պատասխաններու մասին մասնագէտներու կարծիքը նանութեամբ կ'ընդունին :

ԶԲՕՍԱՆՔ

Լուծումն քիւ Շ համեազի

Կերպարանափոխութիւն

Կեր , պար , կերպ , պարան , նա , ափ , փոխ , ռի , ութ :

ՀԱՆՏԵԼՈՒԿ ԹԻՒԿ

Ամեն բանի պատճառ եմ .
Առանձ ինծի արդիւնք չիք ,
Թ'որոնքն զիս , ներկայ եմ ,
Թէ ոչ , երբէք , մի' տըքնիք :
Գիտնոց կաճառք , փաստաբանք
Փիլիսոփայք , թուարանք ,
Քաղաքագէտք և շատեր
Ինձմով կրնեն միշտ խոհեր :
Թէ զիս երկու մաս բաժնես .
Առաջինս է մի արդեւք
Ուսկից անցնել չը , կարես .
Եւ ոչ , իսկ մի գըտնես ելք :
Վերջինովս կը պանծան
Գրադէտ կամ փաստարան
Վարդապետք ալ գործածեն
Երբ կոչուենքի նստած են :

Լ. Խ. Ն.

Պատասխանը մինչեւ յառաջիկայ հինգ-չարթի առաւօտ :

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ՄԱՆՁԵՍԹԻՐ . — Յ. Բ. Ստացանք ձեր յանձնարարած վաճառատունէն 38 ֆո :

ԱՐՄԱՇ . — Պ. — Ընդունեցանք , բայց պարզ ուշքւամ մ'է . պիտի գրուի ձեզ այս մասին :

ՄԱԼԿԱՐԱ . — Վ. Մ. Զօլաքեան , ստացանք նամակնիդ և թերթերը զրկեցինք ձեր ցոյց տուած նոր հասցէին . շնորհակալութիւն :

ՄԱՂՆԻՍԱ . — Գ. Մ. Էօլմէզեան . — Ձեր ցոյց տուած հասցէներով թերթերը կը ղըրկենք ձեզ ինչպէս նաեւ ընկալադրերը : Շնորհակալութիւն ձեր զգացմանց :

ԻԶՄԻՏ . — Ա. Կտաւճեան . — պակաս թերթերնիդ կ'ստանաք այս բօսթով :

ՀԱՐՑՈՒՄ

Թիւ 33 . — Մալկարայէն մեզ կը գրեն թէ այն կողմի արջառները (հրա «չըբը») շատ կուտան հիւանդութենէն բռնուած են , կըրնանք դարմանու մին միջոցը ցոյց տալիքեց : Պատ . Այո' , յառաջիկայ թիւին :

Ա.Ռ. ԸՆԹԵՐՑՈՂՍ

Հանրագիտակի Ղ. Բուլատ էֆ. ի խմբագրութեամբ հրատարակուել սկսելէն ի վեր, կը տեսնուի որ իր լռեանմ ուղղութիւնը ժողովրդին կեանքի առօրեայ պիտոյից հետ անմիջական կապակցութիւն ունեցող նիւթերով կ'զբաղի, որով իր օգտակարութիւնը երեւան կը բերէ. բայց որովհետեւ հացի խնդրոյն հետ զուարճանալ ալ անհրաժեշտ է, ուստի այս անգամ Հանրագիտակի վարչութեան անդամակից Մարգարեան Վահրամ էֆ. ի խնդրանաց համաձայն փափաքեցանք ձեռք ալ Հանրագիտակի Պատ. ընթերցողաց հետըհետէ զուարճալիքներու շարք մը նուիրել:

Մեր գրութիւններն առայժմ չորս երեսներ պիտի գրաւեն ՊԱՅՈՒՍԱԿ վերնագրին ներքեւ. եւ եթէ յարգոյ ընթերցողը ձեռնտու գտնուի մեր այս ձեռնարկին, «Ճերմակ վարդը» անուն նոր հեղինակած մէկ վեպերնիս պիտի սկսինք մաս առ մաս հրատարակել, որոնք տեղական կեանքէ ու օրուան անցքերէ յօրինուած հետաքրքրաշարժ պատմութիւն մ'է: Բայց նախորդ կորուսեալ կտակի բաղդին չ'վիճակելու համար, պէտք է որ գոնէ երկու հարիւր բաժանորդ ունենանք. ուստի կը խնդրենք վիպասէր ընթերցողներէ, որ իրենց բաժանորդին՝ երկտողիւ մը թերթիս վարչութեան կամ ուղղակի մեզ իմացնել բարեհաճին, որպէսզի պէտք եղած բաժանորդաց թիւն՝ եթէ կիսով չափ լրանայ, առանց սպասելու ամրոցջանալուն, ընդհուպ սկսինք վէպին հրատարակութեան:

* * *

Երկու խօսք ալ գրականութեան ցեղերու:

Տասն ամիսներէ ի վեր, Ծաղիկի խմբագրութենէ հրաժարած եմ. սակայն ատկէ ի վեր է, դեռ այդ հանդէսին մէջ հրատարակուած զուեշտական անհեթեթ ու անճաշակ հրատարակութիւններն ինձ կը վերագրուին, հրաժարիլս ազգարարութեամ չըլլալուն պատճառաւ:

Ասկէ զատ, Ծաղիկի արդի տնօրէնը մեր «ԿՈՐՈՒՍԵԱԿ ԿՏԱԿԸ» անուն վէպը դեռ կը շարունակէ հրատարակել Ծաղիկի մէջ. անշուշտ ընդօրինակելով բնագրէն, որ միամտաբար հաւատարմութիւն ունեցած էինք Ծաղիկի գրասենեակը թողուլ մնալ մը, գրաշարաց դիւրութեան համար:

Ծիծաղելին այն է որ այժմ Ծաղիկ եւ Մօզայիք թերթերու զոյգ մը յարաբնոյթ հրատարակիչներ, մեր անտէր վէպը կը շարունակեն հրատարակել իրարու ձեռքէ կորզելով, առանց մեզ բան մը հարցնելու: Եւ մենք վարմանալով կը խորհէինք թէ ինչպէ՞ս պիտի կարենան շարունակել մեր գիրքը, քանի որ բնագրին ամրոցջը ոչ մին ունի, ոչ միւսը: Ելմարեցանք մնացինք երբ տեսանք որ Պիպերեան Կարապետ Կորուսեալ կտակին հեղինակութիւնը ինք ստանձնելով, այդ բազմամեայ աշխատանացս արդիւնքն՝ հիմնովին խեղաթիւրուած հրատարակել կը շարունակէ:

Հեաաքրքիր եմք տեսնել թէ ինչպէ՞ս պիտի վերջացնեն սա անտէր վէպն այդ երկու «պատուաւոր» հրատարակիչներն:

ՅԱԿՈԲ Մ. ՀԱՃԵԱՆ

ՊԱՅՈՒՍԱԿ

ՊԷԼ ՎԻԻ ՏԸ ՉԷՕԲԼԻԻԿ

Ինչպէս որ Բերա իւր աննման ժարաէն տը Պէլլիւն ունի, մինք ալ Պօլսոյ կողմը ունեցանք Պէլ վիւ տը Չէօբլիւկ մը: Այս վայրը, Բերա եւ դեղերը բնակողներու դեռ անձանթ ըլլալուն, կ'արժէ որ հակիրճ մէկ նշկարագիրն ընենք:

Եէնի գարու ե Գում գարուի աւանդական դռներն, թէ անուններովն եւ թէ բնական դիրքովն գրեթէ իրարու քոյր կը համարուին: Այս երկու արուարձանները գլխաւորաբար մէկզմէկու կը հաղորդակցին երկաթուղոյն ծովափնեայ ուղիով:

Շատեր դեռ կը յիշեն անշուշտ, որ ժամանակաւ բազմաթիւ դռներով պոստապարուած էին այս երկու թաղերն, որոնք յետոյ հեազհեաէ թաղերով իրենց՝ կաղնեփայտէ ահադին դռները, գրեթէ բացօդեալ կը կենակցին այժմ թաղ ու թաղեցի նոյն անուանի Չէօբլիւկ անուն դրօսավայ-

րին վրայ որ ինչպէս ըսինք, ժամանակէ մը ի վեր հանրութեան զբօսավայր եղած է առաւօտէն մինչև իրիկուն արեակէջ այդ ուղին, որ դալարախիտ ծառերու տեղ, հեռագրական թելերու ձողեր միօրինակ կը զարդարեն ճամբուն ամբողջ երկայնքը:

Այս զբօսատեղին, քիչ ժամանակի մէջ գերազանցեց Հիւնքեար խկէլէսի դարաստանը, կէօք սոյի սաղարթավարդ ձորակը, Պէօլի քտէրէի քարափը և այլ աման անուանի զբօսավայրերը:

Չէօրլիկ անուանեալ այս՝ ըստ ոմանց «Պէլլիւն», որ իրր զբօսատեղի կը ծառայէ Գում գարուի, կէտիկ բաշայի, Լանկայի, Եէնի գարուի և ասոնց յարակից բազմաթիւ թաղերու և տանի չափ խաներու, մասնաւորապէս կիրակի օրերը ժամը տասնէն դիւշերուան մինչև հինգը՝ խուռն բազմութիւն տիկնանց և արանց, կը ըսկոյն ճեմել առանց տեղ մը նստելով դադար առնելու և առանց յոգնելու պիտի ըսէինք, եթէ քրտնաթոր ճակատներ՝ ոմանց ձեռքի ճերմակ դաշկինակները սեւցուցած չ'տեսնէինք:

Զբօսավայրին այժմու միակ գաղտնածն, Ագամ նախահօր երրորդ որդոյն անուամբ նուիրագործուած է:

Գազեն ք. Սէք. իւր կիճէ սեժա ծաղիկներովն ու կիճէ կիւնսիւզ ճեժա սիրտինդէր երիտասարդներովն՝ որոնք, եղանակին յարմար, միշտ ծաղիկ մը կը կրեն իրենց կոճկածակին վրայ, և Ագօրաթունէ, Կիթառէ ու Չը, զըլթմա անուանեալ Պիւֆէրօյէ բաղկացեալ պանսօ մուգիգայովն՝ որ ձայներու ներդաշնակութեան այնչափ կարի որութիւն չեն տար, յաճախորդը բացարձակ հանգիստ կրնայ վայելել եթէ խուռ, կոյր և համր է:

Մեզ թուի թէ՝ իրաւամբ Պէլլիւն, այսինքն գեղատեսիլ ըսեր են այս տեղի տեսարանին. բայց Ֆէնէր պահչէ և Խլսանայ կղզիներուն հեռաւոր և միապաղաղ տեսքէն, ծովի երկու

կոծիծներու նման կերելին նաև Սիւրի և Նասը կղզեակներն, որոնք ամայի մնացած են ի ստեղծմանէ աշխարհի մինչև յայսօր:

Իսկ գիշերները տեսարանն բոլորովին կ'այլափոխի. գաղինցին առջև մէկ ծայրէն միւսը, անտաշ ցիցերու ագուցուած ցանցառ ու ողորմելի կաթի լամպարներ, այս վայրը լուսաւորել տեսի, այնպիսի խաւարին շամանթաղ մը կը սփռեն տիրող մթնոլորտին մէջ, որ քովի նստողք անգամ այլ է թէ կին, գիւրաւ չես կրնար զանազանել շատ անգամ, պայծառ լուսնակը կը մթազնեն պատուրդներէ միւս գարշաբոյր մուխերն, որք անընդհատ չըջագայող բազմութեան յարուցած փոշին խառնուելով, ամեն նստողուն քիթերն անգամ՝ փռնքտացնել կը ստիպեն:

Հոս, Կռէմ աշախանի - ժառնէնիէ և այլ տեսակ պաղպաղակներու տեղ, Ամէրիգան Ֆրստըրը, Գապագ չէքիւտէկի և Սարըզ լէպլէպիսի կ'սպառեն յաճախորդք մեծ քանակութեամբ. այնպէս որ, արօճացող ոչխարներու նման, բոլոր տիկնանց և օրիորդաց ծամոցնին, միշտ շարժուն վիճակի մէջ կ'երևին:

Անցեալ իրիկուն, բարեկամի մը հետ Պէլլիւն ա' չէօլիւկ շրջագայիլ գայինք. տիրող սառար բազմութեանն անցու գարձը դրելէ խափանած էր. ուստի Գազէն ա' Սէթ մտանք թիւեւս նստելու տեղ մը գտնելու յոյսով. աթոռ և աթոռակ բոլորովին զրաւուած էին. բարեբաղդաբար տարեց տիկին մը և երկու օրիորդներ նոյն միջոցին ստքի ելան և տիկինը խիստ մոտերմօրէն մեզ լսաւ թէ — Աղաներ, մենք կերթանք կոր, սոնտայիաներն ուս հէմէն տէր եղիք որ պաշխասին զապլը չընէ — շնորհակալութիւն յայտնելով այս բարեացակամ տիկնոջ, միամտաբար առած խրատին հետեւցանք ու անկտակած նստանք:

Անմիջապէս անդրաւարտիք հաղած

հուժկու սպասաւոր մը, բազմական-
ներուն գրեթէ մէջէն ու վրայէն անց-
նելով եկաւ:

— Ազալար նէ իշերսինիզ:

— Գահվէ վա՛ր մը...

— Գահվէ տէ վար, լօքում տա
վար, կազօզ տա վար:

— Պիղէ շէքէրի ալ իբի քահվէ կէ-
թիւ:

— Շէքէրի ալ իբի... պոռալով,
եկած կերպովն ուրիշ նորեկներու քով
վազեց:

Անդգալաբար ըստ մեծի մասին տիկ-
նանց և օրիորդաց մէջ մնացած էինք.
սրնք տիրող ժխորին մէջ իրար հաս-
կընալու համար բարձրաձայն կը խօ-
սակցէին:

— Վէրդին, Վէրդին, կրտէր խոր-
տեաշ օրիորդ մը քովի ընկերուհոյն,
Նեկտարին նշանածը նայէ, գէմը առ-
նալու հէլվածին քովը կեցեր ար-
խատաշներուն հետ կը խորագուի կոր:

— Գա ո՛րնէ, կէօզլիւկիւ մը կայ-
ներ է նէ անէ՞. չէնէ քովի սիվրի մօ-
լուքն է:

— Ձէ, առ երկուքին ետին կեցէր
տէ, նայէ, մասներովը փրլլ փրլլ
պաստօնը կը տառցունէ կոր:

— Բէք շնորքով տղայ, տահա կէնճ
ալ է:

— Քա չեյլաւ աչկ տընես, եանի
Նեկտարին ծառքէն չես խալըսիր:

— Ծառքէն չեմ առներ կոր եա,
չիտակը բէք կուտօն տեղը ճովինս
մըն է. սանկ կեցուածքը պիլէ աշպէնի
կըսէ կոր. դա մեզի կը նայի կոր,
եռմուրճախը, ան ինչ փըլարը փըլարը
աչքեր ունի:

— Եանի առ ըսածներդ Նեկտարը
խմանայ կա՞յ եա, պիւթիւն մազերդ
կը վեթրտէ,

— Ինչ հատտին է մնացեր. կուշ-
տին կաթիթ մը տնեմէ, անոր հոգին
կը հանեմ. նայէ, նայէ, մեր թորա-
ֆը կը նայի տէ քիթին տակէն ալ կը
խնայի կոր:

— Քա հայտէ սանկ պաշտակելու

պէս ընենք տէ, օ տէյիլտէն առջևէն
անցնինք:

— Նալլէթ ըլլայ, խալապալըին
անցնելու տեղ կա՞յ քի եյլանք:

— Դուն ինծի հեա եկոյ, ընտոր
ըլլայնէ ճամբայ մը կը կանանք. հայ-
րիկ մենք քիչ մը սանկ պիտի պտըա-
կինք տէ կանք:

— Նստէ տեղդդ, առ խալապալը-
խին հեաերնիդ էրիկ մարդսըլ խեն-
դեցար զահէր:

— Ինչ կրլլայ հայրիկ, ասխաւար
ինսան կը պաշտին կոր նէ հոգի չու-
նի՞ն...

— Աման տուն ալ Սրոս ազա, կէն-
ճերը քիչ մը պիտի հովահին, հայտէ
գացէք ամա, տիխաթ ըրէք շմենաը-
ֆէրին տակը չի մնաք:

Այս միջոցին խիստ մօտերէն, դա-
ւաթներու կոտրաւքի և անոր յաջոր-
դող յիշողներու ազմուկ մը ելնելով,
ընթատ տողին գառցանք: Անդրաւար-
տիքով սպասաւորը ապսպրած սուր-
ճերնիս բերելու միջոցին, ծանուցեալ
աչալընթեամբը, մեզ մօտ նստող
տիկնոջ մը զարնուելով, սուրճին ու
ջրի գաւաթները վրան թափելու կո-
տրուեց էր:

— Դէօրտուն ծօ, հայվան կիպի
կէլտին իւստիւմէ տիւշտին:

— Էյ նէ եաբալըմ տուտու հանըմ.
չիմտի էօլէլիմ մի. պիր գազա տըր
օլտու. պուրտա ասամ տիւշիւ պ էօ-
լիւ եօր, իշերտէն պիր պէզ կէթիլէլիմ
տէ սիլի վէր պիր շէյ դալմազ:

— Ճէհէնեմ օլ շուրտան, սէին նէ
պէզին լաղըմ նէ պիր շէլին:

— Վայ, վայ, վայ, վարըն կէօրիւն
պիր տամիւս սու տէօրիւլմիւշ իւստիւ-
նէ, ճանրն սաղ օլտուն, երեզիլիւնիւն
թաշը տիւշմէտի եա:

— Կարճ կապէ Լուսիկ, հիմայ բան
մնէր եղաւ:

— Վախ, վախ, վախ, դա տահա
երկու անգամ չէի հագեր. ամա ծե-
ված օրըս պիր տիւզիւ աչկս կը խա-
ղար կոր... Ծունա պաղ գօգօնա էլի-

սօքսիս, աճապ գտրուսա չըքա՞ր տէրսին:

— Պիր սէյ քէ օլմուս, գալէ մի՛ խօլօշէանիս...

— Աման դուն ալ, կօլօշկադ ունենաս հէմէն, կիւզէլիմ պաղէն ֆիստանիս տարին լմնցաւ:

— Էյ գա, երկան ըրիր, հիմա կելլամ բարչա, բարչա կընեմ:

— Ֆուրձայիլա ցըքմաղ. քիթիէ Սիմիօն ալա, սօտայիլա ըրիզմա (լուալ) խտէր...

— Աչկիդ խաղա կնիկ, կոլիզմային ալ լէրէ հանելը չէի ընեք:

— Վաղանցիկ սէ, նորը կը շինեմ, տահա պիր տէեէճէլին գալար՞ մը. գա Մաննիկ, բէլիդ տակէն բախիին շիշէն ուսուլով մը աստին սուր:

— Հիմայ կետիններուն տակը կասնիմ, էյ ետնի խախտէճին տեսնալու ըլլայ նէ, մեզ տիւզճէ կը վռնտէ:

— Սէն մէռաքտան չըք, հիմա գայ նէ հատ մնալ անոր պիտի տամ օտա պիզտէն տիր. գօգօնա էվտոքսիճա, սանա պիր թէք կէլէլի՞մ մի:

— Էֆիսարիստօ քիթիէ Սիմիօն ալա, գալէ գէֆայիմու երնայի:

— Քա ինչո՞ւ զօր կրնես. նայէ մէյմը քէրկէֆիս տակը կիսայի կըսէ կոր:

— Աչկ օլսուն սանա կնիկ, հոռմերէնը ճուրի պէս կըլլեր ես, տէրնոր գօգօնա, շունու թէզէլտէն չաքը վէր, շիմտի էթրաֆտան կէօրիւլէր:

— Սէնի կիւզէլ խաթրիսի իճին իճէրիմ. մա, սէքարադալօ բէա տէն ըինօ...

— Քա ո՞ր բերուգալը Տէսքինօյին համար կըսէ կոր:

— Աշտարակտայը՞ շէրտէիդ. խաթերդ համար սա ալ կը խմեմ՝ ամա պաշխա չեմ խմեր կըսէ կոր:

— Տեսա՞ր, ինչու ատտար զօր կընես, կէնճը կինով պիտի՞ ընես, ետքը զօքանչին լեզուէն ընտո՞ր ազատելու է:

— Մէկ քանի բախի ալ անոր կուտանք. ան ալ կը գինովցնենք, քէֆըդ նայէ պէ կնիկ... սա չանթան բաց-

տէ, երկու հատ չիրօղ տուր անկէ:

Նոյն հետայն դարձեալ սպասուողին ձայնը լսուեցաւ որ այս անգամ վառտա... Տօգունմարը՞ն պօռալով, սուրճերնիս անվտանգ բերաւ սեղանին վրայ դրաւ, բայց դժբաղդաբար ժամը գիշերուան մէկին մօտեցեր էր, ուստի սպասուողը կեցնելով ըսի:

— Պիզիմ պօրճումուզ գա՞շ բարա տըր արգատաշ...

— Այթը պուշուդ զուրուշ:

— Այթը պուշուդ մի՞... պուրտա գահվէ գաշ բարա տըր:

— Գըրդ բարա տըր,

— Էյ իրի գահվէ իքի զուրուշ, տէօրթ պուշուդ նէ՞ բարասը տըր:

— Իչ շիշէ կազօղ տա մատամալար իչտի, էտէր տէօրթ պուշուդ, իրի տէ գահվէ էթտի ալթը պուշուդ:

— Մատամլար կազօղ իչտի իսէ պիզէ՞ նէ. իսթէլիպ բարասընը ալայըտըն:

— Իսթէտիմ իսէ աղալարըմըզ վէրէճէք տէտիլէր:

— Օնլար պիզիմ մատամըմըզ տէյիլ այ օղուլ:

— Նէ պիլէլիմ պէն, բարամաղըմը մը գօզլարըմ:

Դակարթը լաւ լարուած էր, ուստի խօսքը չերկարեցաւ համար, բարեկամա մէճիտիյէ մը հանելով. «Շունուն գուսուրընը կէթիր» ըսաւ:

— Ուֆագլըդ թութմամ:

— Ուֆագլըդ թութմամ նէ՞ տէմէք տիր:

— Նէ պէլայա չաթաղ, ուֆագլըդ եօգտուր տէմէք տիր, օն իւչ պուշուդ զրուշ նէ՞ բարա վէրէճէլիմ կէրի:

— Այօղուլ, պէլայա սէն չաթմատըն պիզ չաթաղը ըսելով, բարեկամիս հետ գրպան ու քսակ վեր ի վտր պրպտելով վեց ու կէս զրուշը վճարեցինք, և առանց ետեւնիս դառնալու, մեկնեցանք այս պրանչելի Պէլվի տը Զէօրլիւկէն:

Յ. Մ. ՇԱԶԱՆ

ԱՐՏՈՆԱՏԷՐ — Ա. ԼՈՒՍԻՆՆԱՆ

ՀԱՒԱՐԻՉ-ՄԱՍՆԱԳԷՏ
ԳՐԱԾՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ

ՊՕՂՈՍ Ա. ԱՆՊՈՅԱՆՆԱՆ

Ձագմագերլար Եօզուհու, Թիւ 37

1. Գնումներ կ'ընէ ամէն տեղակ յար-
դի և հազուադիւս (rares) բուլերու՝ մա-
նաւանդ արեւելեան գրողմաթղթերու
որու հաւաքիչը և մանադէտն է :

2. Իր չունեցած բուլերուն համար ե-
թէ ուզուի փոխանակութիւն ալ կ'ընէ
գրողմացուցակի (catalogue) գիներու հա-
մեմատութեամբ :

2-20



ՀՈՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱՊՈՒԼԵԱՆ

ձեղալ պէյ խաֆի գրան կից, բիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդար-
ձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, ոչ
ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն
կողմերը: Գաւառներու յանձնարարու-
թիւնները փութով և ինամով կը կա-
տարուին:

Չինական, Հնդկական, Ճապոնի և Սէյ-
լանի էն աղիւ թէյերէն ուղղակի բեր-
ուած, կը գտնուին հոն:

Ձգուչանալ սոյն վաճառանիշին կեղ-
ծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱՊՈՒԼԵԱՆ
Ստորագրութիւնը:

Հանրապետական կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս :
կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր :
Երկրագործական, Արհեստական եւ Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով :
Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն Հանրապետական լրագրի

Ե. Պոլիս, Զարդարեան Կրասուն, Չագմախքար-Սօգունու քիւ 50

در علیّه ده چاقا قیلم ده . ۵۰ نومرولی ژاړ طاریان کښخاښنده (حاضر اقبال) مجموعہ علوم غرنسی اداره سنده

Հանրապետական պատրաստ է ընդունել ամեն տեսակ ծանուցումներ, ազդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով : Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երգերէն զրկել երկու օրինակ, զոր պիտի ազդարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը :

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պողարեան	ԿԵՍԱՐԻԱՅ. — Գեր. Տրդատ Խ. Վ. Պալեան
ԱՏԱՐԱԶԱՐ. — Ստեփան էֆ. Ստիրիչեան	ՄԱՐԱՇ. — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
ԱՐԱԲԿԻՐ. — Յ. Պ. էֆ. Մանուէլեան.	Վարժապետեան.
ԱԹԵՆՔ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան.	ՄԱՐՋՈՒԱՆ. — Յովհաննէս էֆ. Յակոբեան
ԳՈՒՐՏ-ՊԵԼԵՆ. — Արժ. Տ. Ստեփան քահանայ Մկրեան.	ՄՈՒՇ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան.
ԳԱՀԻՐԷ. — Մ. Պաղտատար էֆ. Ս. Նաթանեան.	ՈՒՐՅԱ. — Գէորգ էֆ. Ոսկերիչեան.
ԷՐՋՐՈՒՄ. — Տեաք Ինճիճեան Եղբարք.	ՊԱՆՏԸՐՄԱ. — Արմենակ էֆ. Ս. Մալրեան.
ԹԷՀՐԱՆ. — Կարապետ էֆ. Բարսեան.	ՊԱՐՏԻՋԱԿ. — Վահան էֆ. Ճլուռի.
ԹՕԳԱՏ. — Յովհաննէս էֆ. Գաղանճեան.	ՊՐՈՒՍԱ. — Օննիկ էֆ. Լուծիեան.
ԻՋՄԻՐ. — Կարապետ էֆ. Մալեճանեան.	ՌՈՏՈՍԹՕ. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.
ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան.	ՍԱՄՍՈՆ. — Կարապետ էֆ. Սէֆէրեան.
ԽԱՐԵՐԴ. — Խաչիկ էֆ. Քէօսէեան.	ՍՐՎԱՋ. — Յ. էֆ. Գարակէօզեան.
	ՏՐԱՊԶՈՆ. — Սահակ էֆ. Էթմէքեան.

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ

Դիրք գնել կ'ուզէ՞ք, դիմեցե՞ք Զարդարեան Կրասունք. հոն միշտ պիտի գտնէք ամեն ուզածնիդ եւ միշտ զեղյով :

Հանրապետական կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Սամաթիա, Կայարանը թիւթիւնճիւ Արթին աղաի խանութը.
Մագրի-Գիւղ, Պ. Պողոս Ագնաւորեանի խանութը.
Սկիւտար, Պ. Փիլիթօֆճեանի խանութը.
Բերա, Մեծ փողոց Պ. Գառնիկ Կիւլէրեանի խանութը :